Սոփերք Հայկականք
ԺԸ
ԵՂԻՇԷԻ ՔԱՀԱՆԱՅԻ
ՃԱՌ
ՅԱՅԼԱԿԵՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ի Վենետիկ
Ի Տպարանի Մխիթարեանց
ՌՅԳ - 1854

N 277

Սրբասիրի Տեառն Եղիշէի քահանայի և ճգնաւոր կրօնաւորի և միայնակեացի ի Թաբօր լերին յայտնութիւն Տեառն առ Պետրոսեանց և Մեծ աւուր Վարդաւառին

Մինչդեռ երթային նոքա 'ի ճանապարհի, ասէ տէր մեր ցերկոտաանսն. Զո՞ ուստեք ասեն զինէն մարդիկս թէ իցեմ: Պատմեցին նմա զարտաքնոցն, զի այլ ընդ այլոյ կարծէին: Ասէ ցնոսա. Իսկ դուք զի՞նչ ասէք զինէն. յառաջեցաւ Պետրոս եւ ասէ. Դու ես Քրիստոս Յիսուս Որդի Աստուծոյ: Գովեաց տէր մեր զգեղեցիկ վկայութիւն նորա, և Հօր իւրում ետ զյայտնութիւն շնորհին. և զի դեռ եւս Պետրոս այսր և անդր դեգերէր, կարծէր եթէ Քրիստոս ոչ մեռանիցի, ոչ քաջ գիտացեալ, եթե մահուամբն նորա մահ մեռանի և աշխարհ կենդանանայ. ետես տէր մեր եթե մոռացաւ Սիմոն զերանութիւնսն երկնաւորս, արկ մորմոքումն բանից 'ի լսելիս նորա. բոլոր ինքն շարժեցաւ յահագին երկեւղէն. իբրեւ լուաւ 'ի տեառնէ, եթե Պարտ է որդւոյ մարդոյ բազումս չարչարանս ընդունել, մեռանել և յերիր աւուր յառնել. յոյժ տրտմեցոյց անուամբ մահուն և առաւել քան զյոյժ մխիթարեաց աւետեօք յարութեանն: Իսկ նորա 'ի մեծ տագնապէ՝ մահուն յիշատակօք մոռացաւ զաւետիս յառնելոյն. որպէս եւ է տեսանել 'ի բնութեանս մերում. հին ախտքն բնութեանն մեղացն՝ ոչ տայ թոյլ վաղվաղակի եկամուտ նորոյ կենացս 'ի ներքս անկանել. որպէս եւ որդիք ժողովրդեանն հին կուրութեամբն խանտային ընդ նորոյ կենացս երեւումն , անուանելով զնա Եղիա կամ Երեմիա կամ զայլ ոք յառաջին մարգարէիցն, չար 'ի մխիթարութիւն անձանց իւրեանց մահկանացուացս: Մահկանացու կարծէք՝ զմիտս ժողովրդեանն յերկուացուցանելով յայնմանէ, որ եկն կատարել զբանս մարգարէիցն. նովին ախտիւ խօթանայր եւ Պետրոս. զվկայութիւնն գեղեցիկ մատոյց, զխորհուրդսն չարաչար հիւանդացոյց. իբրեւ յանզգայ սաստկագոյնս ընդդէմ չոգաւ. Քա՜ւ քեզ, մի՛ լիցի այդ բան, ասէ: Զբոլոր հին կարծիս մտացն աւծ թափեաց, զառաջին գեղեցիկ վկայութիւնն ելոյծ. Հայր յայտնեաց նմա զբոլոր աստուածութիւնն Որդւոյ, զի աստուածութեամբ եւ մարդկութեամբ զչարչարանսն ընդունիցի, եւ որ չարչարիցի՝ նոյն եւ յառնիցէ: Յայսմ աւետիս խնդալ էր ամենեցուն եւ ոչ ըղձիւք արգելուլ զնա յերկոցունց: Տեսե՞ր, ուր

զաստուծոյսն խօսեցաւ՝ երանի ետ նմա. իսկ ուր ըստ հին մարդոյն խորհեցաւ՝ ասաց նմա յայտնապէս, Յետս երթ սատանայ, զի ոչ խորհիս զԱստուծոյն, այլ զմարդկանս:

Մարդոյ խորհուրդք իբրեւ զծուխ անպիտան են, ՛ի ծուխ անդր սաստեաց եւ հետակորոյս արար զնա ՛ի նոր մարդոյս, զի իցէ ինքնածագ լոյս առանց ապականացու խորհրդոյ, որ եւ արքունիքն իսկ անուանելոց էին՝ յոր սաստեաց, եւ առ ընկէց զնա յետոյ իւր, զի ինքն զկամս Հօր իւրոյ կատարիցէ առանց գայթակղութեան իրիք դնելոյ: Ուսույց եւ նոցա չարչարանս ընդունել յիւրաքանչիւր անձինս, եւ անդէն առ նմին յուսով յարութեամբ հաստատեաց զնոսա. ոչ միայն որ յապայն լինիցի, այլ զի եւ առժամայն փոքր ՛ի շատէ ցուցցէ զնմանութիւն երկրորդ գալստեանն իւրոյ, որպէս եւ ասէ իսկ անսուտ վկայութեամբ. Արդարեւ ասեմ ձեզ, իցեն ոմանք որ այժմ աստ կայցեն, մի ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ. զի եկեալ հասեալ իցէ զօրութեամբ իւրով:

Եւ յայսմ տեղւոջ երեւի ոմանց սակաւիկ մի ընդդէմ միմեանց բանք աւետարանագրացն. Մատթէոս ետ վեց աւուր ասէ. իսկ Ղուկաս եւ Մարկոս յետ ութ աւուր ասեն. այլ մեք բաւական համարիմք զոմանց ասացեալսն. Մատթէոս, ասեն, զաստի անտիսն եթող և միայն զմիջոցն առ ՛ի համար. իսկ երկուքն և զխոստանալն և զերեւելն հանդերձ միջաւն. և հաճոյ թուեցաւ ամենեցուն ընդունել զայս. և մեք ՛ի նոցուն հաւանիմք միաբանեալ, որպէս ցուցանէ մեզ Մարկոս աւետարանագիր. Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ իբրեւ անցին աւուրք ութ, առեալ տէր մեր ընդ իւր զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և ել ՛ի լեառն մի բարձր առանձինն, և յայլակերպս եղեւ առաջի նոցա, և ձորձրք իւր եղեն փայլուն և սպիտակ յոյժ, որպէս զի ոչ կարէին թափիչք երկրի այնպիսի ինչ սպիտակացուցանել. և երեւեցան նոցա Մովսէս և Եղիա զի կային և խօսէին ընդ Յիսուսի և պատմէին զելս նորա զոր կամէր կատարել յԵրուսաղէմ: Յայս վայր սուրբ աւետարանագիրս երկրորդեաց զյայտնութիւնն երկնաւոր: Յամենայն բանս աստուածային գրոց՝յոյժ է զարմանալ յողեղէն բնութեանս. իսկ յայնպիսում յերկնաւոր երեւման ոչ միայն մեք տկարանամք, այլ և անմարմին զօրութիւնք երկնից: Զբոլոր ժամանակսն զոր շրջեցաւ տէր մեր յաշխարհի՝ առաւել զանցուցանէ ըստ մարդկային խոնարհութեանս. իսկ ի լերինս յայսմիկ՝ և ըստ հրեշտակացն անցոյց ահաւորութիւնն. ոչ միայն զի ինքն լուսեղէն փառօքն երևեցաւ, այլ զի և մահուն եբեկ դրունս, և զառաքելոցն կատարեաց զխոստմունս. Աստուծոյ, ասէ, այսպէս լաւ խորհել, զի առանց մեր մի՛ ինչ կատարեսցի: Եւ Դաւիթ յաղաղակելն իւրում ասէ. Ինձ սպասեն արդարք մինչեւ հատուսցես: Եւ երկրորդ մեծ ձայնիւքն ՛ի մեծամեծաց մինչեւ ցփոքրկունս՝ կատարածին ոչ ուրուք ընկալեալ լինի զհատուցմունսն իւրաքանչիւր. որպէս ի միում շաբաթու հաստատեաց զամենայն արարածս, ի միում աւուր շաբաթանան երկինք և երկիր, և ամենայն մարդ ընդունի ըստ վաստակոց իւրոց: Արդ էած ընդ իւր Մովսէս և զԵղիա ՛ի վկայութիւն. զի Մովսէսիւ զյարութիւն մեռելոցն ուսուցանէ նոցա. և Եղիայիւ ցուցցէ զսիրելի մահ աստուածութեանն իւրոյ նոցա, որում Եղիայն յոյժ էր տեղեկագոյն, և ցանկայր թէ ե՞րբ լինիցի տեսանել, և տեղին ճշմարիտ էր արքայութիւն. քանզի լիով էր անդ միասնական Երրորդութիւնն: Եւ վասն զի ոչ է Աստուած ՛ի տեղւոջ, երեւեցաւ մարմնականացն իբրեւ զտեղաւոր. և ի

տեղւոջն ուր Աստուածն գումարեցաւ՝ առանց պատկառելոյ անուանի արքայութիւ. քազի այն իսկ է արքայութիւն ուր աստուածութիւնն երեւի:

Եւ դու, ո՛վ տէր իմ Պետրոս, ընդէ՞ր զահի հարեալ ես ՛ի մահուանէդ, ուստի բոլոր բարիքն զեղանին աշխարհի. զոր և այժմ իսկ յայլոց զդոյն լուիցես. զի ասէ աւետարանագիրն եթէ Մովսէս և Եղիա զելս նորա պատմէին զոր կատարելոցն էր յԵրուսաղէմ: Արդ իբրեւ ետես Պետրոս, եթէ մեռեալք և կենդանիք զնոյն բանս քարոզեն, և ինքն կամօք տէր յայն եկեալ է Հօր միաբանութեամբ, եւս քաջ վտանգեցաւ յառաջին երկեւղն. քանզի հաստատեալ գիտաց, եթէ ՛ի մահուանէ տէր մեր ոչ է զանգիտելոց, և մեզ թողուլ և փախչել զսա անհնար է. նաեւ զայն եւս քաջագոյն ածէր զմտաւ, եթէ յորժամ իջանէ սա ՛ի լեռնէ աստի, պարզ յԵրուսաղէմ երթայ, ուր մեզ կասկած իսկ է մահու. վասն այսր խղճի մտաց իւրոց, սկսաւ ասել ցտէր, զի հրամայեսցէ առնել տաղաւարս իւրաքանչիւր նոցա, եւ զՄովսէս եւ զԵղիա մի՛ արձակեսցէ անդրէն. որպէս թէ ասիցէ ոք ՛ի կարծիս մտաց իւրոց, թէ չիք յայսմ լերին իշխանութիւն մահու, և եթէ ՛ի լեառնս յայս մահ երկնչի ելանել. Հրեայքն իսկ ոչ կարեն յանդգնել ՛ի սա. ապա եթէ եւ մեք իսկ երթիցուք յԵրուսաղէմ, յորժամ եւ Մովսէս եւ Եղիա ընդ մեզ իցեն, ոչ կարեն քահանային խուել զմեզ, քանզի յոյժ տեղեկագոյն են սաստիկ ահին սոցա: Այն Մովսէս է այս որ յանապատին բիւրս բազումս կոտորեաց ՛ի նոցանէ, և բանիւ հրամանաւ սորա բացաւ երկիր և եկուլ զբանակս նոցա: Չեն անտեղեակ և վասն Եղիայի, թէ սակաւիկ ինչ խոժոռին ընդդէմ սորա, կապէ զերկինս եւ արգելու զանձրեւ ՛ի սոցանէ. եւ եթէ եւս յանդգնեսցին՝ իջուցանէ հուր երկնից եւ այրէ զթշնամիսն ճշմարտութեանն. ՛ի բազում տեղիս գիտեն զզօրութիւն ահի սորա, ոչ միայն անուանեալ քահանայքն, այլ և արտաքին ստացողքն նոցա. չէ մոռացեալ նոցա զսատակումն զութհարիւր քրմաց նոցա զոր ինքն իւրովք ձեռօքն կոտորեաց ՛ի հեղեղատն Կիշոնի.և եթէ Աքայաբ թագաւոր երկնչէր ՛ի սմանէ, ո՞րչափ եւս Աննա և Կայիափա՝ որ տկարագոյնք են քան զԱքայաբ:

Վասն այսր ամենայն կարծեաց նոցա որ մարդկաբար երկնչէին, յոյժ ողորմեալ նոցա Հօր ՛ի վերուստ ասէ. Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք: Ծառայք երկրաւորք պահապանք լինէին տեառն իւրեանց. զի երկոքեան անկեալք են ընդ աւխտիւք երկեւղի. երկնից տէրութիւնն ոչ ինքն յումեքէ պահեալ լինի, այլ նա պահէ զամենեսեան իւրով զօրութեամբն: Եւ տաղաւարս հարկանել դուք մի՛ աշխատիք. եթե կարի ջեռարուք, ահա տուեալ է ձեզ ամպ հովանի, ընդ ամպովդ հովանեաւ զովացարուք: Այս բարբառ իբրեւ եկն նոցա յերկնից, հայեցան տեսին զՅիսուս միայն. և ապա կարացին իմանալ, եթէ յահէ անտի թմբրեալ էին նոքա, եւ ոչ գիտէին զինչ խօսէին: Եւ եթէ թմբրեալս կոչէ զնոսա գիրն, զիա՞րդ ծանեան զՄովսէս եւ զԵղիա. յայտ է թէ յիմարելոց էին թմբրեալք, այլ ոչ ՛ի լսելոյ եւ յիմանալոյ. զոր աչօքն տեսին ճշմարիտ էր, եւ զոր ականջօքն լուան՝ չէր սուտ. այլ քանզի կարի ահագին էր ժամն, ոչ կարաց մարդկային բնութիւնն հասու լինել երկնաւոր բնութեանն. վասն զի այսր և անդր սայթաքէին և մեղադրել ոչ ոք կարէր: Զի եթէ մեծն Աբրահամ զվերին զօրութիւնսն բոլորովին մարդացեալս ետես, բախելով ՛ի յոգիսն՝ ոչ կարէր կալ ՛ի վերայ ճշմարտիւ, այսր և անդր տարաբերէր զմիտսն. տեսանէր երիս և մի

կարծէր, կարծեր մի եւ խօսէր ընդ երիս. երեւէին մարդ, նա իմանայր Աստուած. եւ ո՞ իսկ ի հողեղէն բնութեանս կարասցէ ճշմարտիւ կալ և իմանալ զայն զանբաւ մեծութիւն. ոչ միայն մարդիկ մարմնաւոր, այլ և ոչ պարզ բնութիւնքն երկնից: Յիրաւի կոչէ գիրն թմբրեալս զնոսա. յորմէ զօրութենէ լերինք հալին եւ անդունդք ցամաքին, եւ ամենայն թանձրահող երկիրս ՛ի հիմանէ դղրդեալ սասանի. ողորմութեամբ իւրով խնայէ ՛ի մեզ, զի գործք ձեռաց նորա եմք. որպէս հանապազ յամենեսեան և այն օր երկեան ՛ի լերինն:

Գիտեմք զի աստուածային գիրք այլ ընդ այլոյ չխոսին, այլ զամենայն պատմեն ճշմարտիւ. բայց է բան, որպէս ասի՝ նոյնպէս և իմանի. այլ պիտոյ է ծածկեալ մտաց բանին յայտնութիւն, որ հաւատովք ընդունին ՛ի փրկութիւն անձանց: Ծանեան, ասեն, Պետրոսեանք զՄովսեսև զԵղիա իբրեւ ասես, եթէ այո՛ ծանեան, զիա՞րդ ասեն ծանեան՝ զոր ոչն գիտէին. քաջ ՛ի միտ ա՛ռ զզօրութիւն բանին, և մի՛ մոռացկոտ լինիր իբրեւ զտէր Պետրոս. ՛ի գլուխ ճառիդ ընթերցիր, արքայութիւն ասաց տեղւոյն. զիք անդ մոռացումն մարդկային, այլ յիշողութիւն անմոռացման. քանզի մեզ նմանութեամբ էր տեղին արքայութիւն, իսկ առ աստուածութիւնն ամենայնիւ բուանդակ: Ուսոյց մեզ տէր ոչ զբնական դպրութիւնս այլ զիմացական գիտութիւնն. իբրեւ թէ փոխեցան արքն յերկրէ յերկինս, զաստի իմացմունս թմբրութիւն կոչեցին. զանտեսն ճանաչելով՝ արքայութեան մանկունս. անուանեաց, եւ մարգարէութեան մանկունս ուսոյց. նոցա գիտութեամբ, զի ոչ եւս կարօտանայցեմք յերկնաւոր ժառանգութեանն, անծանօթս լինել առաջնոց, միջնոց եւ վերջնոց: Յորժամ արքայութեան որդիք լինիցին արժանաւոր մարդիկ՝ ծանօթութիւն յաստուածատուր շնորհէ անտի բաշխի. զոր այժմ մտօք իմանամք՝ ընդ հայելի օրինակ անուանեցաւ. իսկ յորժամ մարմնական քող ՛ի մէնջ բարձցի, դէմ յանդիման տեսանեմք զաստուածութիւնն որպէս եւ մարրի. զիրեշտակաց բնութիւն բովանդակ, զանծանօթսն իբրեւ զանձինս մեր, արտաքնովքս իբրեւ զարտաքին դէմս, մտօք՝ զարտաքին եւ զներքին: Եւ զի դեռ եւս Պետրոսեանք մարմնաւորք էին, կաթեաց ՛ի նոսա նշոյլ իմանալի շնորհին ՛ի յոգիսն. բաւանդակ ծանեան զՄովսէս և զԵղիա. իսկ արտաքին զգայութեամբք էր ՛ի տեղւոջ անդ՝ որ այլ ընդ այլոյ խոսեցան. և այլոյ մասամբ դարձեալ ողորմեցաւ նոցա Աստուած. այն է՝ զի հաւաստեաւ ծանեան զՄովսէս և զԵղիա, և զի ինչ մի գէղ մնասցէ ՛ի միտս նոցա, ՛ի բանից անտի նոցա եւս քաջ հաստատեցին զծանօթութիւնն: Նոքա յայտնի խօսէին ընդ տեառն, եւ սոքա զամէն լիով լսէին ՛ի նոցանէ, և զոր լուանն՝ այլ ոչ իմացան. զի եթէ մոռացեալ էին՝ և գրէին ոչ աւետարանագիրքն:

Բայց խնդիր այս կայ առաջի. Զի՞նչ արդեօք Մովսէս խօսէր ընդ տէառն, և կամ զի՞նչ Եղիա երկրորդէր առաջի նորա: Աւետարանիչն պատմէ եթէ զելս նորա ասէին զոր կատարելոց էր յԵրուսաղէմ. ելք նորա մահ նորա է, և ՛ի մահուանէ իսկ նորա եղեն ամենայն բարութիւնքն երկնաւորք: Եւ ո՞ւր արդեւք գրեաց Մովսէս վասն մահու Որդւոյն Աստուծոյ: Մի՛ այդպէս հարցուներ ցիս, թէ ու՞ր արդեւք գրեաց. ամենայն մարգարէք և օրէնք վասն մարդանալոյ Բանին Աստուծոյ պատմեցին մեզ, չարչարելոյ և մեռանելոյ և յառնելոյ. ՛ի Ծնունդն. Մարգարէ յարուցէ ձեզ Աստուած յեղբարց ձերոց, յօրէնսդրութիւն նորոց կտակարանաց. մի իբրեւ զիսն ասելով՝ նմա լուիջիք, զիւր օրէնսն լռեցոյց, զտեառնն

յառաջ հրամայեաց մատուցանել, ՝ի մկրտութիւնն, ՝ի ծովն, յամպն, ՝ի սիւն հրոյն, ՝ի խոցումն կողիցն, ՝ի վտակաբուխ վէմն: Եթէ յինէն ոչ ընդունիս, յառաքելոց հարկաւ որ ընդունիս. Վէմն, ասէ, որ երթայր զհետ ժողովրդեանն նա ինքն էր Քրիստոս. ՝ի փայտ խաչին, ՝ի գաւազանն նշանագործ, ՝ի մահ անարատին, հեղումն արեան գառանցն յԵգիպտոց, ՝ի զօրութիւն մահուն՝ փրկութեամբ նոցին ՝ի ծառայութենէ, զաւետիս յարութեանն, զայն սուրբ ոսկերքն Յովսեփու պատմէին նոցա. մեռեալք զկենդանիս ապրեցուցին ՝ի մահուանէ. զվերանալն նորա՝ մեծն Դաւիթ գրեաց նոցա եւ ամենեցուն. Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և տէր մեր ձայնիւ փողով: Զայս ամենայն և Եղիա գիտէր, քանզի մի հոգի էր որ խօսէր յամենեսեան, մի օրինակ գիտէին ամենեքեան. էր ոք որ սակաւ բանիւք զայս ասէր, և էր որ բնզմագոյն առնէր զյանդիմանութիւնն, սակայն զօրութեամբ զսոյն երկրորդեն: Զայս ամենայն խօսէին ընդ տեառն Մովսէս և Եղիա, զի առաքեալքն վկայ լինիցին անսուտ բանից նոցա, եթէ վաղու հասեալ էր դատավճիռն մահու ՝ի վերա նոցա, և մի ոք իշխեսցէ լինել ընդդէմ բանիցն նորա. և որպէս երեւեցաւ յայտնի յայնմ հետէ այլ ոչ ոք իշխեաց երկրորդել զնոյն բանս առաջի տեառն:

Բայց դու իբրեւ լուիցես զկալն Մովսէսեանց և խօսել ընդ նմա մի՛ վարկպարազի անփոյթ առնիցես և մի՛ սակաւ բանս իմանայցես, և մի՛ ընդ վայր շատախոսութիւն համարեսցիս. քաջ զմտաւ ած և տես զպատուական արսն. եթէ միտ դնես, զբոլոր երկրային արքունեօքս զանց առնէ տեղին. և կամ ո՞յր առաջի կանն, եւ կամ որք կանն՝ եթե ոչ զերկնից մեծութիւնն ունէին, ոչ կարէին առաջի տեառն երկնից կալ և խօսել ընդ նմա. այլ սիրով իւրով մերձեցոյց առ ինքն, և ներելով իւրով արար նոցա զունկնդրութիւնն, վասն որոյ կարացին լինել յերկարաբանք: Թուի ինձ թէ յոյժ ողբային զազգատոհմն, զի գութ ունէին ՝ի վերայ գաւառացն՝ վասն քաղցր արամատոյն. թէպէտ և լեալ էր ՝ի նոցանէ յառաջ արդարք բազումք, յայնմ ժամանակի չար տեսանէին զամենեսեան: Ճշմարտեցին եթէ եկն եհաս ժամանակ, և մերձեցաւ օրն յորում շիջանելոց էր նոցա ճրագն առկայծեալ, և եղէգն ջախջախեալ արմատաքի խլեցոց էր. ՝ի ծածուկ ողբային զազգն ՝ի միտս իւրեանց, տեսին եթէ ամենայն ինչ նոցա ՝ի հեթանոսս փոխելոց է, և նոքա մնան լոկ իբրեւ մարմին առանց շնչոյ: Տեսին և զբարերարութիւնն Աստուծոյ, որ ոչ կամի ընդ կորուստ և ոչ ընդ մի մարդոյ, համարձակեցան հարցանել ցտէր՝ որ գիտէր զծածուկս սրտից նոցա, եթէ գուցէ ինչ հնարս, ասեն, այլով օրինակաւ քեզ մեռանել, և ազգին չկորնչել, և հեթանոսաց լինել փրկութիւն: Իսկ տէր մեր ոչ տրտմեցոյց զսիրելի ծառայսն իւր, այլ զհարցումն պատասխանւոյն ՝ի կամս Հօր իւր արար:

Գուցէ ասիցէք ցիս, Ուստի՞ իշխեցեր զանգիրսդ երկրորդել: Ես իսկ տեսի զտէր՝ զի լայր յԵրուսաղէմ և յոյժ լայր զազգն ընտրեալ. նոյնպէս մեծ էր, զի այսօր ՝ի վերայ երեսաց իւրոց յաղօթս անկաւ առ Աստուած. ոչ մարդ էր դուզնաքեայ, այլ բոլոր զօրութեամբ իւրով, յերկար տաժանութեամբ զողջոյն գիշերն, մինչեւ քրտունք սաստիկք հոսեցան ՝ի նմանէ: Եւ ՝ի կատարել աղօթիցն, զՄովսէսեանց հարցուածն երկրորդէր. Հայր, ասէ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. և անդէն վաղվաղակի զխնդիր իրացն ՝ի կամս Հօր իւրոյ ապաստան առնէր: Եւ դարձեալ եկաց յաղօթս, և զնոյն բանս երկրորդեաց: Եւ մեզ այս

կարեւոր է ուսանել քան զամենայն, որպէս նա ըստ կամս Հօրն ոչ կամեցաւ ելանել, և մի դու ըստ նորա կամսն ելանիցես: Վասն որոյ և Եղիայեանք ոչ կարացին մեղադիր լինել տեառն, նոյնպէս և Պետրոսեանք որք ականատեսք եղեն, ոչ միայն մեղադրեալք, այլ և նոքա շնորհակալու ընդ ամենայն տիեզերս: Այս է երկարաբանութիւն արանցն առ տէր, ոչ միայն շատ խօսելով ընդ նմա, այլ ամենեւին չգնալ 'ի նմանէ, նա և եթէ հնար ինչ գուցէ՝ մեռանել ընդ նմա. և եթէ Մովսէս ոչ մարթէր կրկին մեռանել, վասն Եղիայի՝ եթե տէր կամէր՝ գոյթ հնար: Յորժամ առաջին հարցուած նոցա 'ի գլուխ ոչ չոգաւ, վասն երկրորդին յոյժ էին ցանկացեալք: Ո՞ ոք 'ի սիրելի զօրականացն մնասցէ 'ի պատերազմէ, յորժամ թագաւորն ինքնին 'ի վերայ թշնամւոյն ելանիցէ. և եթե երկայինքն զայս առնեն, որք երկբայս են յաղթիլ քան թէ յաղթել, քանի՞օ(ս՞)ն յօժարութեամբ երկնաւորին լինել նահատակակից. զի ոչ մահու կասկած առաջի կայ, այլ անմահ կենաց յաղթութիւն: Յայսմ պատերազմէ ոչ ումեք օրէն է զանգիտել, ոչ արանց և ոչ կանանց, ոչ արդարոց և ոչ մեղաւորաց, թե հնար է՝ գուցէ և երկնաւորացն: Բայց սա աւասիկ թէպէտ և Եղիայի կարի անձկալի՝ լինել նմա խաչակից, բայց արգել զնա տէր, զի մի ոք յարդարոց խաչեսցի ընդ նմա. քանզի ոչ իսկ էր եկեալ եթէ վասն արդարոց խաչեսցի, այլ վասն բարւոյ՝ որպէս և համարձակեցաւն իսկ մեռանել, զի իւրովին մահուամբն զամենեցուն մահ խափանեսցէ: Արգել զԵղիա 'ի մահուանէ, զի մի զտուեալ պատիւն հանցէ 'ի նմանէ. և ոչ միայն զԵղիա արգելու լինել իւր մահակից, այլ և ոչ զմի ոք յարդարոց՝ ոչ կամի, եթէ ոք մեռցի ընդ նմա, այլ 'ի մեղաւորաց, ոչ իւրով բանիւ, այլ զոր քահանայապետքն կամեսցին. յայնժամ թերեւս ևանդ երեւեսցի նորա բարերարութիւնն, զոր և յառաջագոյն իսկ ասացեալ է, եթէ վասն մեր ընդ անօրէնս համարեցաւ: Առ սէր իւր խնայեաց յԵղիայ, զի կեցցէ յանմահութեան պարգեւին, և լիցի քարոզ երկրորդ գալստեան նորա:

Գիտէ Աստուած զինչ գործէ, և զբարին ինքն առանձինն կատարէ. շատ իցէ քեզ եթէ 'ի նորա յոյսն գիտիցես վայելել, և յորժամ նա դուռն բացցէ քեզ. ապա եթէ կամիս՝ և դու կարես գործել իբրեւ զնա, որպէս եղեւ առաքելովքն և լինի Քրիստոսիւ մինչեւ ցայսօր: Գիտեմ զի բազում ցասուցեալ են ինձ. Տէր մեր, ասեն, զարքայութիւնն եցոյց 'ի լերին անդ, և դու եկեալ զմահու ճառս պատմես մեզ: Միտ դիր ճառիդ, և անտի հաւանիս. ելանել իսկ նոցա 'ի լեառնն՝ մահու պատճառք եղեն սկիզբն. և եկեալ Մովսէսեանց զնոյն երկրորդեցին առաջի տեառն, և մեք 'ի նոյն ճառ տեսաք զարքայութիւնն: Յոյժ սպիտակ էր պայծառութիւն ձորձոյն և անցանէր ըստ արեգակնային ճառագայթս այն. ըստ արժանաւոր տեղւոյն և հանդերձիցն վայելչութիւն պիտոյ էր. այլ կատարեալ այնիւ էր արքայութիւնն՝ ուր Հայր և Որդի մարդկան յայտնին. զայն և անփոփոխ իսկ է իմանալ, անանց կալ մնալ յաւիտենական: Բայց 'ի սպիտակութիւն ձորձոյն սակաւիկ մի ակնարկեցից՝ 'ի մահ անմահին: Ամենայն արարածք յանմխիթար սուգ նստէին. վասն զի անմահին Աստուածոյ անմահ պատկեր՝ մարդս է. ընդ մահուամբ անկեալ դնէր՝ յանլոյծ խաւարի, և սգածէին առհասարակ արդարք և մեղաւորք, և ծանրալից հանդերձ սգոյ ունէին, որ է նմանութիւն խաւարի. և ոչ ոք կարէր յեղելոցս զծանրութիւն սգոյն բառնալ յաշխարհէ, բայց միայն այնիւ էր հնար՝ որով եղեւն ամենայն: Արդ զարդարեցաւ 'ի մահն իւր, ոչ երկրային պատուական

հանդերձիւք, այլ բնական ինքնածագ լուսովն իւրով, զի հալածեսցէ յաշխարհէ զիշխանութիւն խաւարի, և զթախծալից տրտմութիւն մարդկան մխիթարեսցէ. և զներկուած հին տրտմութեանն՝ իւրով անապական լուսովն սպիտակացուսցէ: Եւ մարդիկ որ 'ի վերայ մահուան սիրելեաց իւրեանց տխրին և մթանան, և գրեթէ կենդանոյն զմահ ճաշակեն, հայեսցին նոքա 'ի զուարթութիւն պայծառութեան մահու Որդւոյն Աստուծոյ, և բարձցի 'ի նոցանէ սուգն անյոյս տրտմութեան, և լցցին յուսով յարութեամբն, և մի եւս այլ երկիցեն 'ի մահուանէ, որ դողացոյց զարդարս և զմեղաւորս: Վասն այսորիկ խօսիմք 'ի տեղւոջ աստ զճառս մահու, զի տեսանեմք 'ի սմա զարքայութիւն երկնից, որ եկեալ հասեալ է զօրութեամբ իւրով մեծաւ համարձակութեամբ: Ոտն հարկանեմք 'ի վերա մահու. վասն զի յուսով 'ի վերայ արքայութեան տեսաք զանձինս. հաճեալ եմք ընդ տեղի լերինս, ուր կրկին յայտնութիւնն եղեւ առ մեզ, մանաւանդ թէ երեքկին. մեռեալ գիտեաք զՄովսէս և կենդանի տեսաք. նա եբեր զաւետիս յարութեան ամենայն մարմնոյ: Կիսահաւատ ազգն Հրէից զհոգին Եղիայի յափշտակեալ խոստովանէին, և զմարմինն իբրեւ զանպիտան ինչ գոյացութիւն 'ի վայր ընկեցեալ. եկն երեւեցաւ բուանդակ հոգւով և մարմնով, զի բարձցէ զխիղճ 'ի մտաց նոցա, եթէ կամեսցին ընդունել: Կարծէաք եթէ ոչ անցանէ թագաւորութիւն մահու. տեսաք անդ 'ի լերին զմահ մեռեալ և զկեանս թագաւորեալ:

Եթէ դուք կամիք՝ անդէն 'ի ճառս լերինն դարձցուք, քանզի և իջեալ իսկ չեմք 'ի լեռնէ անտի. եկ մինչ անդն եմք՝ զոնտիսն եւեթ խօսեսցուք. և զ'ինչ անդ բանքն են՝ համակ զնովիմբ եկեսցուք. և եթէ առ 'ի պետս այլոց բանից իջցուք 'ի լեռնէ անտի, դարձեալ 'ի նոյն լեառն ելցուք. եթէ երկիցս և եթէ երիցս սակայն զնոյն արասցուք մինչեւ կատարեսցի ճառս. շուրջ զլերամբն փակեսցուք: Բայց առ այժմ 'ի վեր անդ զտէր Պետրոս հարցանել պարտ է, եթէ Առ ի՞նչ սիրեցեր այդչափ զլեառնդ և այդր կամիս առնել քեզ բնակութիւն, քեզ և ընկերացդ. եթէ առնիցես՝ սակաւիկ մի պատեհագոյն է քեզ և տեառն և Մովսէսի: Եւ այդ ինձ կարի պատեհագոյն թուի. Յարեաւ, ասէ, 'ի մեռելոց, վասն այսր կամիմ թէ աստ կայցեն: Յարուցեալ՝ որ տաղաւարի կարօտանայ. այնմ եւս յարութեան իսկ չէ արժան ասել, այլ երազ և առ աչօք երեւումն: Ուրեմն չեւ եւս տեղեկացեալ վասն յարուցելոյն, սակաւ մի ճաշակ եցոյց քեզ յարութիւնն, ընդ տեանելն և թմբրեցար. եթէ այնպէս փառօք էին նոքա քեզ՝ որ անփոփոխ ընդունելոցն են, դու ապաքէն եւս առաւել վտանգէիր: Բայց ոչ կարեմ մեղադիր լինել քեզ, զի դեռ եւս հրէախառն ես. ընթեռնուս զգրեալսդ օրինացն, այլ իմանալ չեւ եւս կարուցեալ զարժանն:

'Ի լերինն շքեղացան դեմքն Մովսէսի, և հարքն ձեր ոչ կարացին հայել յերեսս նորա մերկ, և դու զոգիսդ ընդ մարմնական վարագուրովդ ծածկեալ ունիս: Մովսէս ծածկելով զդէմսն՝ մերձեցոյց զնոսա առ ինքն, և տէր զայն քող մերկանայ 'ի սրտից ձերոց. անդստին իսկ ունի զմարդասիրութիւն առ ազգդ ձեր. աստուածանուն մեծարեաց զծառայս իւր և փառօք իւրովք զարդարեաց զնա, և ժողովուրդն առ ատելութեան իւրեանց փախչէին 'ի նմանէ. և նա նշանօք և արուեստիւք արծարծէր զնոսա, զի ընդելեալ մարդասիրութեամբ նորա մերկ դիմօք կարասցեն տեսանել զաստուածութիւնն: Սոյն սա նա է, որ բազում իրօք կրթեաց զձեզ, զի այսօր արժանի լինիցիք տեսանել զճաճանչ լուսոյ աստուածութեան.

բայց այսօր դու լաւագոյն ցուցար քան զնոսա. թէպէտ և զարհուրեցար, այլ ոչ 'ի փախուստ դարձար. այդպէս երեւեցաւ, եթէ սէր Աստուծոյ մեծապէս բնակեալ է 'ի քեզ՝ քան յառաջին ժողովուրդն:

Այլ և արդ շուրջ զքեւ հայեաց քաջ. ընդ ու՞մ շրջիս, առ ու՞մ նստիս, ո՞յր ես ուղեկից, և կամ ո՞յր խորհրդակից: Ո՞չ դու ետուր զգեղեցիկ վկայութիւնն և դու խոստովանեցար զՔրիստոս որդի Աստուծոյ. ո՛վ քաջ. Աստուած խոստովանիս և 'ի տաղաւարս բնակեցուցանես. զայդ ոչ միայն Քրիստոս չառնու քեզ յանձն, այլ և ոչ ընկերակից քո Եղիա. զվերանալն նորա տեսեր դու, և պատիւ մեծութեանն երեւեցաւ քեզ. եթէ զայն ճշմարիտ գիտացեր, զայս ոչ արժանապէս խօսիս: Յի՞նչ նիւթոց կազմեսցես զխուղսդ, ասու ինձ. ապաքէն 'ի փայտէ և 'ի խոտոյ. ո՜վ մեծ յերկոտասանդ, քաջայուշ լեր. կառս ունի հրեղէնս, երիւարս բոցեղէնս, հուր և խոտ 'ի միասին ոչ բնակեն. բայց եթէ զայն եւս արտաքոյ թողուցու, ինքն 'ի նոյն պատիւ է զարդարեալ. և եթէ ոչ այնպէս էր զիա՞րդ հանդարտէր կայր բոցոյն առաջի: Քեզ այսօր սակաւիկ մի սպիտակութիւն երեւեցաւ, և դեռ աստանդես բանիւք. ուր Եղիայն բնակեալ է, եւս առաւել պայծառագոյն է, քան որ քեզդ երեւեցաւ, և դու զայդպիսի այր 'ի տաղաւա՞րս հրաւիրես, և ոչ պատկառիս 'ի շքեղ պատուոյ նորա: Դարձեալ և զտէրդ աշխարհաց 'ի կարօտութի՞ւն ածցես և 'ի տեղւոջ կարծես. զդա գիտեա տեղի ամենեցուն և զամենեցուն կարօտութիւն բառնալ: Ոչ 'ի տեղւոջէ այտի երեւեցաւ դա պատուական, այլ տեղիդ դովաւ շքեղացաւ: Սակաւիկ մի սպիտակ ձորձով զարհուրեցար, յորժամ բուռն հայրենի փառօքն տեսցես, յայնժամ և ոչ զմի տեղի յերկրաւոր պատուականաց աստի դմա համարեսցիս արժանի. այլ բարբառն որ եկն 'ի վերուստ՝ զայն գիտեա դմա տեղի և փառս և վայելչութիւն անպատում. և դու յայն հայեաց, զհետ այնր ձայնի լեր կաթոգին: Այժմ աչք մարմնոյդ լցան լուսով, ապա բոլորովին իսկ դու լուսալի լինիս. զի և դու իսկ քեզ հազիւ կարիցես հասու լինել: Այլ տէրդ արքայութեան՝ չէ կարօտ տաղաւարաց. ամպովն արժան էր քեզ ուսանել, որ եհար ժողովրդեանն տաղաւարս յանապատի անբաւ բազմութեանն. ամպն էր բաւական հովանի, և զբոլոր գիշերն լոյս հրոյ առաջնորդէր. և եթէ 'ի չարսն այնպէս գթայր, ո՞րչափ եւս առաւել 'ի ձեզ տառապեալս: Զամենայն ինչ թողեք և զհետ դորա շրջիք. զի՛նչ ասէ ձեզ՝ լուարուք, և զամենայն բարի կամս ձեր՝ դա կատարէ: Անդէն իսկ 'ի տեղւոջդ փոքր մի աղեխարշեցայք 'ի տապոյ փառաց դորա, արագ արագ թանձրացոյց զամպն 'ի վերայ ձեր. եթէ սակաւ մի յամեալ էր՝ և դուք և տեղիդ բոցակէզ լինէիք. նա և 'ի բնական ջերմութենէս աստի են տեղիք, ուր ամարանի հրդեհք բորբոքին. և եթէ մասնաւոր լոյս այդպիսի սաստիկ տապով հարկանել՝ ի՞նչ կարծես զինքնածագն լոյս, եթէ թույլ տայր որ ունէր զծով և զցամաք՝ առ հասարակ կիզոյր: Յայնմ լուսոյ ճաճանչ սակաւ մի երեւեցաւ Պաւղոսի, թէպէտ և ոչ այրեաց զմարմին նորա, զլոյս աչաց նորա եկէղ, թէպէտ և այլ շնորհեցաւ նմա՝ զառաջինն կորոյս: Ողորմութեամբ իւրով ծածկեալ ունի ինքն զինքն, գթէ թէ ոչ բաւեն տեանել զաստուածութիւն նորա: Տեսէ՞ր, ուր խոնարհութեամբ խօսի Աստուած ընդ արարածս՝ զմարդասիրութիւնն իւր յայտնէ. եթէ որպէս էրն՝ և յայտնէր զինքն, եղեալքս յապականութիւն դառնային առաջի նորա:

Արդ մի՛ տէր Պետրոս բարիոք թուեսցի առնել դմա տաղաւարս, զի չէ ժամանակդ այդպիսի գործոյ, և ոչ դու ունիս կազմած շինողաց. չես տեղեակ հիւսնութեան, և ոչ գիտես յորմ կարգել քարինս: Վարդապետ անուանեցաւ և զիւր արուեստն ոչ թաքոյց ՛ի քէն. բայց եթէ դու մոռացկոտ ինչ իցես, և ոչ գիտեմ. հանապաղ քո առաջի գործեաց և գործէ, և յոյժ կամի զի ուսջիք և բանիւք և գործովք, որպէս ինքն առանց մարմնաւոր աշխարութեանց վարէ զարուեստն, ՛ի գոյն նահատակութիւն և զձեզ կրթէ: Մի՛ ընդ քուն խօսիր և մի՛ զճշմարտութիւնն երազակոծ եղեալ՝ այլ ընդ այլոյ պատմես. յերկնաւոր մանրագորս հոտոտեցար, զհետ հետոց դորա ուսիր վերաբերիլ. ՛ի ստուերաշուք տարերցս ելանել փութացիր, քան նստել ընդ սովաւ. յանապական լուսոյն ՛ի ծմակային տեղիս մի աղաչեր բնակել զայդպիսի չքնաղ լոյս. թէ և ջրայինքն տեսանէին՝ ՛ի ցամաք դիմէին, և եթէ ՛ի սանդարամետականսն ծագէր՝ ՛ի վեր կորզեալ ածէր զամենեսեան. եթէ գոյր իշխանութիւն՝ հրեշտակաց թողեալ զայն երկնից լոյսն՝ առ այդ լոյսդ իջանէին: Այդ լոյս յերկնից յերկիր երեւի, զերկրաւորս յերկինս տանի հանէ. և յորժամ յերկրէ ՛ի վեր ծագէ՝ զվերինսն ՛ի վայր խոնարհեցուցանէ. այդ լուսով ետես Յակոբ զտէր լուսեղէն սանդղոցն. ՛ի լուսեղէն տեղիս բնակեալ էր Եղիա, զայն լոյս թողեալ՝ առ այս լոյս խոնարհեցաւ և եկն. յայդ լոյս աւանդեալ էր Մովսէս, ազդեցաւ նմա ՛ի Նաբաւ լերինն, փութացաւ եկն առ անձկալիդ: Տեսանես, զիա՞րդ փարին երկոքեան զլուսովն. չյագին բազում բանիւն զոր խօսինն ընդ նմա. ՛ի ծագել այդ լուսոյ՝ արեգակն խաւարեցաւ, որպէս աստեղք յարեգականէ. արեգակն ՛ի դմանէ չերեւեցաւ: Եւ քեզ յոյժ երանի տամ, զայդ տեսեր և յայն հրաւիրեցար. ամենայն աշակերտ զվարդապետին արուեստն փութայ ուսանել: Ո՞չ ՛ի քոց տաղաւարաց անտի եհան դա զքեզ. խղկունս իմն արարեալ ձեր ՛ի ծովեզերին, վասն այդր լուսոյ՝ ետ թողուլ ձեզ զայն. զի յայդ թեւակոխեսջիք, ընդ այդ ընդելջիք, զայտի եկեսջիք, ՛ի դոյն խոկասջիք, դմին արժանի լիջիք զգենող: Չի՞ք տեսեալ զազգ թռչնոցդ. ծագուցն յորժամ թեւքն թաւացեալ հաստանան՝ ոչ ընթացս ունին ՛ի վերայ բունոցն, այլ ՛ի հայրենի արուեստ վերաբերին. զոր տեսանենն՝ զմտաւ ածեն զայն. մինչդեռ մատաղաբոյս են թեւքն՝ անդէն ՛ի տեղւոջն ստէպ ստէպ շարժին. յորժամ բոլոր վարազաթեւք աճեցեալ մեծանան՝ տակաւին ՛ի վեր վազեն ոստախաղաց լինելով և աներկեւղք եղեալք յանկանելոյ, ապա բարձրացեալ ՛ի վերոյ օդոց ճախրեն զլերամբք, թռուցեալ առ ամպովք քերեն, անկասկածք անցանեն գնալ յերկրասող վնասակարացս:

Օրինակաւ իմն տէր զձեզ ուսուցանէ. կրթեաց ՛ի նշանս և յարուեստս մեծամեծս, զի ամենայնիւ զձեզ յինքն սպասաւորեալ միացուսցէ. զի և դուք զայլս ՛ի մահուանէ ՛ի կեանս որսասջիք. արար զձեզ կիրթս և հմուտս և տեղեկագոյնս. զի իցէք պատճառք կենաց ամենայն աշխարհի: Բայց դու որ ոչ էիր ՛ի լերին անդ, մի՛ իբրեւ զանուն լուսոյն լսես՝ առ այսմ լոյս հարցեն, կացցեն միտք քո. զայս լոյս հանապազ տեսանեմք, ոչ յիմարիմք և ոչ թմբրիմք, և ոչ ամենեւին երկեւղ ինչ անկանի ՛ի սիրտս մեր. այլ որ զցայգն եմք՝ նոյն եմք և զցերեկն. վասն զի նիւթեղէն արարած է, և մեզ ՛ի սպասավորութիւն առեալ. պղտոր, մթին, փոշեխառն, մրրկեալ, խթացեալ տեսեր, և ոչ զերկինսն վերինս կարէ ցուցանել. և այնչափ օտար է յայնմ լուսոյ՝ որպէս և նկարեալն ՛ի կենդանւոյ: Որպէս և ինքն աստուածութիւնն

բազում մասամբք երեւեցաւ մարգարէիցն, և մի ոք 'ի նոցանէ զԱստուած ոչ կարաց տեսանել. այլ նմանութեամբքն որով տեսին՝ բաւական համարեցան. հանգեան կամօք իւրեանց և կատարեցան բանք նոցա գործովք. որպէս և այսօր 'ի լերինն երեւեցաւ, այն է զոր հանապազ տեսանէին. այլ ոչ այսօր նոյնպէս տեսին, և ոչ այլ ընդ այլոյ զայլ ոք Քրիստոս տեսին: Որ էրն զնոյն տեսին, ոչ նոյնպէս գձուձ. փոքր մի վերագոյն քան զառաջինն տեսին և թմբրեցան 'ի նշանաց անտի. և եթէ ավալի քան զձեզ կարծէիք՝ այլ ոչ ինչ 'ի վեր հայէին միտք ձեր: Աստուծոյ նշանագործութիւն բոլոր արարածքս են. զաշխարհս ոչ 'ի նշանս ինչ արարեալ է ումեք, զի և գոյր իսկ ոք ոչ յառաջ քան զաշխարհ. և նա բնութեամբ ունի զբարերարութիւնն զոր ինչ կամի՝ կաէ առնել, ոչ 'ի պետս իւրոյ անկարօտ բնութեանն, այլ 'ի յեղելոցս 'ի լրումն առանց պակասութեան. և զմարդ սիրէ քան զբոլոր արարծս. և կամի 'ի ձեռն նշանացն՝ զի զանեղ բնութիւնն ծանիցեն, և 'ի ճանաչելոյ անտի լիցի սիրոյ բարեկամութիւն. և դարձեալ եւս վերագոյնս ձգիցէ, որպէս թէ իւր իսկ առնիցէ գահակից: Զօր և այսօր առ ձեզ նորին սիրոյ եցոյց զօրութիւն: Ոչ երկրաւոր նշանօք, այլ երկնից մասնաւորութեամբ, ցայսօր զմարմնականսն տեսանէիք իբրեւ զմարդ, վարդապետ կարդայիք, ըստ մարդկութեան եւեթ իմանայիք զզարմնացումնդ. վասն այսորիկ փարատեաց 'ի նոցանէ զմարմնաւոր տգիտութիւնն, զի երկնաւոր յայտնութեամբն կրթեսցէ զնոսա, և մի՛ համակ զմարմնականօքն եկեսցեն. որպէս և ասէ գիրն, եթէ Յայլակերպս եղեւ առաջի նոցա: Յայլակերպսն ոչ այլ ինչ է իմանալ, այլ աստուածակերպ երեւեցաւ առաջի նոցա, զի և զնոսա յայն կերպարանս փոխեաց 'ի ժամանակի իւրում. կրթեցան աչք նոցա հայել 'ի մարմնաւորութիւնն տեառն. ոչ կարացին խորհուրդք նոցա համբառնալ յերկինս. ընդհարան աչք նոցա 'ի լոյս փառաց նորա, կարացին զարժանի էութիւն նորա իմանալ: Ի բազում բարձր տեղիս ելեալ էին նոքա ընդ տեառն, այլ ոչ մտօք. այնպիսի տեսիլ եցոյց նոցա այն օր զիմանալի լոյսն, զի կրթեսցէ զնոսա յեւս առաւելութիւն: Ըստ մարմնոյ 'ի լեառն ելին, մտօք վերացոյց յամենայն աշխարհական ցանկութեանցս. բարձր է լեառն քան զքաղաքս. զնոսա քան զբնաւ աշխարհս բարձրացոյց: Երբեմն ելին ընդ տեառն 'ի Գալիլեայ 'ի լեառնն՝ ուր զերանութիւնսն աւետարանեաց նոցա. բանս երկնաւորս լուան, այլ միտք նոցա ոչ ինչ բարձաւ 'ի երկրաւորացս. իսկ աստ բանիւք ինչ ոչ խօսեցաւ ընդ նոսա. լուսով երկնացոյց զլեառնն, և լռութեամբ երկնաւորս արար զնոսա:

է իսկ 'ի բնութեանս մերում, յորժամ շրջիմք 'ի բազմամբոխ քաղաքի, զքաղաքական կարգսն սիրեմք ուսանել. յաճախագոյն պշնումք ընդ փառս երկրաւորս, և խոնարհին միտք մեր յիրս երկրաւորս ապականացուս, և եթէ ոչ մեծաւ պատրաստութեամբ զգույշ կայցես անձին քում՝ հազիւ կարասցես ապրել 'ի պատիր զբօսանաց աշխարհիս: Վասն որոյ և Մովսէս հանեալ զժողովուրդն յԵգիպտոսէ, շրջան առ յանապատի անդ ամս քառասուն, և ապա կարաց լինել նոցա օրէնսդիր, իսկ իբրեւ բնակեցան 'ի քաղաքս բազմամարդիս, և զեղեալ օրէնսն ոչ կարացին պահել. և է ճշմարիտ, որ ընդ երկիրս պշնու՝ զերկինս ոչ կարէ տեսանել: Ապա և տէր մեր իբրեւ յԵգիպտոսէ եհան զաշակերտսն 'ի լեառն անդր և ուսոյց նոցա զանգիր օրէնս երկնից. քանզի և մեր տեղին առաջին անգիր էր: Գիր

զմարմնականացն խօսի, անգրութիւն զանմարմին էութիւնն ցուցանէ: Գիր՝ զմահն Մովսէսի պատմէ, իսկ անգրութիւն՝ զյայտնութիւն տեառն առ աշակերտսն: Գիրն ինքն անցական է, և զանցաւոր աշխարհս արկանէ ընդ պատմութեամբ: Անգիրն յինքեան գրէ զանցաւորս, զի անանցս արասցէ: Գիրն զվերանալն Եղիայի նիւթական պարուականօքս ասէ. անգրութիւն զերեւումն տեառն և զԵղիայեանց. ոչ իբրեւ այլք յայլում նստեալք և եկեալք, այլ ինքն ինքեամբ երեւեցաւ ՛ի վերոյ քան զերկինս. ոչ այրեցող բնութիւն՝ մարմնականացս ահ արկանելով, այլ լոյս փափուկ և արարող, որպէս և ժառանգաւորաց արքայութեան, յանմարմնականաց տեղիսն զգենուլ: Այնպիսի տէր երեւեալ և ըստ իւրում էական բնութեանն շնորհեաց և ծառայիցն զնոյն փառաւորութիւն. զի եթէ ոչ այնպէս էին, և ոչ մերձենալ կարէին ՛ի հուրն ամենակէզ: Եւ Պետրոսեանք որք տեսող են աստուածային փառացն, և նոքա ՛ի վեր կորզեցին ՛ի ծանր մարմնականացս, հասանելով մինչեւ յիմանալի հրեշտակաց բնակութիւնս. անցեալ կային գեր ՛ի վերոյ մահուամբ, որպէս և երեքն՝ սոյնպէս և երիւքն. ոչ միայն չերկնչել ՛ի մահուանէ, այլ և ՛ի բազում տեղիս հալածական առնել զմահ ՛ի մարդկանէ. քանզի յոյժ մեծացաւ աղքատութիւնն նոցա: Ելին իբրեւ զերկչոտս գտանել ՛ի վերոյ քան զերկեւղ. ելին իբրեւ ընդ որդւոյ մարդոյ, զնոյն տեսին անդ Որդի Աստուծոյ. ելին տգիտագոյնք, ուսան անդ զկատարեալ գիտութիւն, ելին ընդ այնմ զոր գիտէին ծնեալ ՛ի կուսէ. իմացան անդ զնոյն ծնեալ ՛ի Հօրէ յառաջ քան զաշխարհս. ելին ընդ այնմ՝ որ մկրտեալն էր ՛ի Հովհաննէ, տեսին անդ զնոյն՝ որ բնակեալն էր ՛ի ճառագայթս անմատոյց լուսոյ փառաց իւրոց. ելին ընդ այնմ՝ որ հետիոտս վաստակէր գնալով, զնոյն իմացան անդ որ նստի ՛ի կառս քերովբէականս. ելին ընդ այնմ՝ որում Հրէայքն սպառնային զմահն, զնոյն գիտացին տէր մահու և կենաց. ելին ընդ այնմ՝ զոր աղաչէինն մի մատնել զինքն ՛ի մահ. իմացան եթէ ոչ առ երթայ ՛ի մեռեալս՝ Աբրահամեանք ոչ կարեն գալ առ Մովսէսեանս. և զոր արգելուինն ՛ի մահուանէ, յառաջ քան զժամանակն փութային տեսանել զմահ նորա: Արքայութեան պատճառանօք եհան զնոսա ՛ի լեառն անդր. իմաստնացոյց եթէ առանց մահու Միածնին ոչ ոք կարէ ժառանգել զարքայութիւնն:

Եւ իբրեւ երկոքեան հատածքս այս ունին յինքեանս զերկնաւորս և զերկրաւոր բարութիւնս, առ ի՞նչ արդեւք պատուիրէր տէր մեր աշակերտացն և ասէր, ամենեւին չասել ումեք զմեծ յայտնութիւնն որ երեւեցաւ նոցա: Այս սովորութիւն է վարդապետութեանն Քրիստոսի յորժամ զմարդասիրութիւնն ցուցանէր բժշկելով՝ առ ախտաժետս նոցա բազմաց ՛ի նոցանէն զնոյն պատուիրէր, Մի՛ ումեք ասէ, ասիցեք վայրապար կամ ՛ի գեւղս կամ ՛ի քաղաքս. զի և դու զնոյն ուսանիցիս չառնել աշխարհագոյժ զողորմածութիւնս քո. ապա եթէ պիտոյ եւս է ցուցանել, փոխանակ բանից գործքն քարոզեսցեն: Աստուած բոլոր աշխարհս արար և ետ մեզ, և երախտիս ինչ ոչ համարեցաւ մեզ, բայց միայն ճանաչել զնա և զհետ երթալ կամաց նորա: Պատուիրեաց աշակերտացն լինել աստուածանման. քանզի ժառանգ իւր հաստատեաց զնոսա եւ նոքօք զամենայն աշխարհ. յորժամ Աստուծով առնիցեն զամենայն մեծամեծս վարդապետին իւրեանց, ծածկագիտին միայն աւանդեսցեն զխորհուրդսն: Դարձեալ և յոյժ խնայեաց ՛ի նոսա. միթէ ըստ մարմնոյ ինչ պարծեսցին վասն մեծամեծ սքանչելեացն՝ զոր և գործեցին և տեսին անդ. զի ընդ մեջ թշնամեաց շրջէին և ոչ

բարեկամաց, և ավելի առաջի կեղծավոր մեկնչաց, որ իբրեւ զճանճս կեղասէրք էին, ուր գտցեն թարախս՝ առաւել եւս զայրացուցանեն զվէրն չարագոյն եւս քան զայս լինէին բանք նենգաւոր մարդոց. որպէս և եղեն իսկ նոքա պատճառք մահու ժողովրդեանն, ոչ միայն հողածին մարմնոյ, այլ եւ անմահ որդւոյ սպանողք:

Պատուիրեաց նոր նորոգելոցն՝ որք արբին զճաշակս նոր գինւոյն, մի արկցեն ՛ի տիկսն զզօրութիւն գինւոյն ՛ի հինսն, զի ոչ հանդարտեն ընդունել զոյժ նորա. արգել զնոսա ՛ի մեծ վնասէն. քանզի գիտէր եթէ տիկքն պատռին և գինին հեղու ՛ի կորուստ նոցա, որպէս առ Կայիափայիւն իսկ երեւեցաւ. զի յորժամ տեսանիցէք զորդի մարդոյ զի նստի ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ, իբրեւ զտիկ հին ցելաւ ՛ի պատառել պատմուճանին իւրոյ. բոլոր ինքն հեղաւ անկաւ յաստուածային աստիճանէն. և եթէ ՛ի տեառն բանից անտի այնպէս զարկան անկան գանալիք, զի՞նչ համարիցիս դու՝ եթէ յաշակերտաց անտի լուեալ էր վասն երկնաւոր սքանչելեացն. ո՞չ ահա իբրեւ զհուր բորբոքէին ընդդէմ նոցա, այրէին զանձինս և զնոսա առ հասարակ: Քանզի յորժամ լսէին ՛ի նոցանէ՝ անդէն հարցանէին ցնոսա, զի՞նչ էր առաւելութիւն վերին տեսլեան: Եւ եթէ վասն Մովսէսի և Եղիայի պատմէին նոցա՝ սուտ համարէին, զի ոչ կարէին յայտ ուրեք ցուցանել. թէ ասէին՝ եկին երեւեցան և գնացին, զայն ոչ արդար համարէին, քանզի ոչ ունէին զհաւատոցն գիտութիւն յայնժամ և զոր աչօքն իսկ տեսեալ էր ՛ի տեառնէ՝ չհավատային: Դարձեալ թէ և վասն սպիտակ ձորձոցն ինչ ասէին, կրկին կորուստ կորստականացն իսկ հասանէր, կամ լսէին իսկ ոչ զբանս նոցա, կամ ՛ի մեջ բերէին զսպիտակ ձորձս նոցա. քանզի երկրապիշք միայն էին եւ անհաւատ լսելիք, զիմանալի յայտնութիւնն ոչ կարէին տեսանել. և նոքա ՛ի լերին անդ մարմնաւոր ինչ յայտնութիւն ոչ տեսին, այլ երկնաւոր զօրութիւն իմանալով, զայն՝ որոյ ՛ի յայտնութիւնն նա միայն գիտէ, և ում կամի ինքն յայտնէ ըստ մասանց, և մտացն միայն ծոց բաւէ ժողովելով, այլ ոչ բանիւ պատմել և սփռել ՛ի լսելիս ուրուք. զի որ բանիւ գծագրի՝ ընդ մարմնաձեւութեամբ անկանի երեւումն նորա. իսկ երկնաւոր փառքն յայսմանէ վերագոյն են, և ՛ի մարդկանէ և ՛ի հրեշտակաց: Լուր Պաւղոսի առաքելոյ, որ ոչ միայն ՛ի լեառն բարձրացաւ, այլ և յերկինս երրորդ և ՛ի դրախտն, և զպատրաստութիւն սրբոցն ետես, և զբարբառ պորգեւտուին լուաւ, այլ դէմ յանդիման ոչ կարաց հանդիպել և բարբառ որ եկն նմա ՛ի վերուստ ըստ մասանց՝ զզօրութիւն բանիցն ոչ ումեք կարաց երկրորդել: Նոյնպէս և վասն երկնաւոր պարգեւացն՝ զի պատրաստեալ պահին՝ զայն ասաց. այլ ՛ի պատուական երկրաւորաց աստի նմանել ումեք ոչ կարաց, իբրեւ է ճշմարիտ հանդերձեալ. և մեք յայն եմք յուսացեալք՝ զօր Պաւղոսն ետես և պատմել ոչ կարաց. հաւատացեալք ՛ի Քրիստոս լիով իմանան և զիմացեալն տեսանեն և յուսով այնպէս ակն ունիմք՝ որպէս և երանելին Պաւղոս:

Արդ վասն այսր ամենայնի զոր առաքեալքն ՛ի լերին անդ տեսին Հոգւով սրբով, չհրամայեաց պատմել ՛ի լսելիս թերահաւատ ժողովրդեանն. մի՝ զի կարէին իսկ ոչ նոքա պատմողք լինել. միւս եւս՝ որոց պատմէինն՝ նոքա ոչ էին արժանի լսել: Որպէս և ինքն տէր յառաջագոյն ուսոյց զառաքեալսն. Մի տայք, ասէ, զսրբութիւն շանց, և մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց. շան՝ սուրբ և պիղծ կերակուր ընդ մի համարեալ են. և

խոզի քան զպատուական մարգարիտ ընդ պարանոցի՝ խոհերական տիղմ, յոր թաւալի՝ լաւ թուի. զայս տեսանել՝ չար պարգեւաց տուողին թուի, և եւս չարագոյն արտաքին տեսողաց: Վասն որոյ և տէր մեր զլուսաւոր խորհուրդն՝ լուսոյ մանկանցն յայտնեաց, զի եղիցին վկայք ճշմարտութեանն լուսոյն որ երեւեցաւ նոցա ՛ի լերին անդ. և նովին լուսով լուացեալք կայցեն մնասցեն իբրեւ զանստուէր ճառագայթս. և նոքին եղիցին քարոզք լուսաւորութեան նորա, որք եղեն իսկ և կատարեցան. և ամենայն արարածք որք նստէին ՛ի խաւարի և ՛ի ստուերս մահու՝ յայն լոյսն յանանց դիմեցին, և նովին լուսովն լուսաւորեցան և լուսաւորեցին մինչեւ յերկրորդ յայտնութիւն նորին լուսոյ. և նոյն տէր գալոց է լուսաւոր զօրօք երկնաւորօք. և ՛ի նոյն լոյս լուսաւորին մեռեալք, և կենդանիք ամենայն արժանաւորք՝ յանփոփոխ և յանվախճան յաւիտեանս:

Յոյժ կասկած եղեւ մտաց իմոց իբրեւ մերձ եղէ ՛ի կատարած ճառիս. ապա յիշեցի եթէ իրք անխնդիրք մնացին ՛ի միջի սորա. քանզի փոքր ՛ի շատէ տեղեկագոյն եմ խուզող մտաց՝ որ անմեղութեամբ քննեն զզօրութիւն բանին ՛ի շահն անձանց և ՛ի փառս սուրբ եկեղեցւոյ: Տեսանեմք իսկ աստէն և ՛ի մերում աշխարհիս, բազումք վարեցեալք առաքինութեամբ անսխալ հաւատովք ըստ առաքելական կանոնին, յորոց ցնծացեալ բերկրի սուրբ եկեղեցի հեթանոսաց: Զայս հաւատ յանձին բերելով դեգերէին յուսումնասիրութեան ուխտաւոր մանկունք Հայոց մեծաց. զանձինս պարապեցուցեալ ՛ի վաճառաշահ օգտից ոչ ինչ ընթանան զհետ ընչաւէտ մեծութեան. այլ գործ հանապազորդ այնպիսիեացն՝ պահք և աղօթք, զանձինս պահել յամենայն ոգէսպան վնասուց: Այլ հարցք և խնդիրք վասն ծածկեալ բանին զոր ընթեռնուն ՛ի սուրբ կտակարանս, գիտեմ զի հարցանեն յայսմ ճառի ցմիմեանս և ցիս. Յարեաւ, ասեն, Մովսէս ՛ի մեռելոց մարմնով և եկն ՛ի Նաբաւ լեառն առ տէրն մեր. Եղիայի ահա չէր ինչ խափան, որպէս վերացաւն երագ՝ ահա երագագոյն եւս գայր. Մովսէսի ընդ այն ինչ ոչ զարմանամք եթէ ընդ Եղիայի արագութեամբ գտաւ. այլ եթէ մարմնով յարեաւ և կամ եթէ հոգւով՝ կերպարանեցաւ առաջի նոցա: Եթէ մարմնով յարեաւ՝ ճշմրիտ վիշտ եղեւ նմա, այն որ աղաչէր զԱստուած մի անգամ չմեռանել՝ կրկին արդե՞ւք զմահ ճաշակեաց. մանաւանդ զի զԵղիա ետես յանմահութեան, և զտէր հայրենի փառօքն յարքայութեան. և ինքն անդ եւս ՛ի հողոյ եկեալ և անդէն արագ արագ դառնայր. կարի դժվարագոյն է տեղիդ ասէն:

Ինձ ոչ ծանրագոյն թուի հարցուածդ. է ինչ որ ՛ի գրոց ունիմ առնել անդրէն պատասխանի, և է ինչ որ յանգիր էութենէն՝ հայելով յաստուածային զօրութիւն. և ընդդէմք իսկ ոչ են միմեանց. քանզի գիրն ՛ի լսելիս ազդէ զաստուածային պատուիրանս, իսկ անգրութիւնն՝ յաներեւոյթ մտացն տախտակս. և են երկոքեան աստուածատուր շնորհք, զոր աչք տեսանեն, շրթունք ընթեռնուն, ականջք լսեն. առանց գրոց միտք բերեն զմեկնութիւն: Արդ քաջ մտառուացն՝ մեծ է որովայն և անձանձրոյթ է ծովն, և անծանրանալի է բազմութիւն բեռինն. որչափ և անկանի ՛ի ներքս, ոչ յագեալ շատանայ բազմութեամբն. աղաչելով զԱստուած՝ ընկալեալ զերկակն և երրեկին կարիցէ հասու լինել. որպէս և է տեսանել, որք առանց գրոյ խորամուխ եղեն ՛ի սէր Որդւոյն Աստուածոյ՝ ճշմարտութեամբ հասու եղեն գրելոցն. և ոչ ինչ ծածկեցաւ ՛ի նոցանէ յանգիր օրինացն

Աստուծոյ, որպէս և ինքն առաքեալ ասէ. Զի այն զոր կամք յաղօթս՝ որպէս արժան իցէ ոչ գիտեմք, այլ ինքն Հոգին հասանէ ՛ի թիկունս՝ ՛ի հեծութիւնս անմռունչս բարեխօսէ առ Աստուած: Ամենայն սուրբք առանց բանի պատմութեան խօսին ընդ Աստուծոյ, առանց ձայնի արձակելոյ ՛ի վերուստ՝ լսեն կամաց նորա. և զոր ասենն և զոր լսենն՝ ընդ գրով արկանել ոչ կարեն. և առաքինի գործովք իւրեանց յայտնի առնեն զանգիր օրէնսն Աստուծոյ: Եւ յորժամ զայսպիսի զօրութիւն յոգիս մեր հետազօտեմք, կարեմք զծածուկս բանին Աստուծոյ ծածկապէս իմանալ, և զտուչութիւն պարգեւին որ շնորհեաց մեզ՝ արտաբերեմք բարբառով. զի և յայլոց լսելիս ազդիցէ հնչումն երկնաւոր:

Յարոյց Եղիա զմեռեալ և երկուս Եղի(շ՞)ա, և կրկնամահ ոք ոչ ասէ նոցա. այլ մի կեանք և մի մահ. և տէր մեր յարոյց զմեռեալս, նոյն ասի և նոցա. այսքանք էին և Մովսէսի. քանզի յառաջին մահուան իւրում ոչ հիւանդացաւ. ինքն տէրն կոչեաց զնա ՛ի լեառն, և ինքն տէրն որպէս և զտէր առանց չարչարանաց աւանդեաց զնա գերեզմանին: Այսմ և մահ իսկ ոչ է արժան ասել՝ այլ և փոփոխումն. Դաւիթ և զայս քուն իսկ անուանեաց. ես ննջեցի և ՛ի քուն եղէ, զարթեայ և տէր ընդունելի մեր է: Դու իսկ որ հարցանեսդ՝ ո՞չ հանապազօր ի քուն մտանես, ընդ առաւօտն յարուցեալ կանգնիս, ոչ ինչ տրտմիս յաղագս յառնելոյն. զի գիտես եթէ անդէն հասանէ ընդկողմանել: Ապա թէ առիցես թէ այս դիւրագոյն է և այն դժուարագոյն, մի՛ ասեր, սուտ կարծես, հազար անգամ մահն Մովսէսի դիւրագոյն է, քան զքունդ քո: Եթէ քաղցեալ և ծարաւի ՛ի քուն մտանիցես, յար ուտես և ոչ յագիս. աղբեր աղբեր շրջիս և ոչ ըմպես. և եթէ բռնադարեցար ինչ ավելի քան զչափն անքուն, զառաւօտն ցանկաս տեսանել, և եթէ պայմանաւ կերակրոցն և առողջութեամբ մարմնոցդ դէպ եղեւ քեզ շարժել զաղտեղութիւն, և կամ լինիս երազակոծ, այսր և անդր միտքդ դրդուին, որով ՛ի տուընջեան քեզ չարաւ թուիցին. և չիք իսկ ամենեւին խաղաղութիւն ՛ի մերում շարժմունս: Իսկ յայսմանէ տէրն մեր զՄովսէս պարկեշտագոյնս ամփոփեաց. ծերութիւն ոչ թարշամեցոյց զգեղ նորա, և հիվանդութիւն ոչ ապականեաց զմարմին նորա, ոչ յառաջնում նուագին հեծութեամբ էջ ՛ի դժոխս, և ոչ ՛ի վերջնում հրաժարելս ՛ի տեառնէ դանդաղեցաւ ինչ թերեւս. և վասն այնորիկ Աստուած ինքնին իսկ ամփոփեաց .. սա ՛ի մահ անդր. ՛ի ձեռն նորա փոխեաց զնա և ծածկեաց. և ձայն նորա կոչեաց զնա, և զամպն հովանի արար ՛ի վերայ նոցա, նոյն ինքն փութանակի աւ առ սիրելին իւր զՄովսէս, որպէս և ինքն տէրն մեր ասէ. Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ: Յարոյց Որդի զՂազար կարդալով առ Հայր. յարոյց զՄովսէս Հայր միաբանութեամբ Որդւոյ, զի երեւեցան իսկ առ նմա. ըստ այսմ իմասջիր զանքակ միաբանութիւնն սուրբ Երրորդութեանն, և յարարչութեան և ՛ի փրկութեան և ՛ի նշանագործութեան և ՛ի յարութեան նորոգմանն: Եւ վասն Մովսէսի յարութեանն մարմնովն մի ինչ տկարասցին միտք ուրուք. չէ ճառ բանիցս այսոցիկ առակ օրինակի որպէս մեծատանն ՛ի դժոխս և կամ Աբրահամու և Ղազարու յարքայութեանն. այն զհանդերձելոցն յայտ առնէ: Տեսեր և յաշակերտաց անտի չիք ոք այնմ վկայ. քանզի ծածուկքն Աստուծոյ միայն են յայտնի. իսկ որ ճշմարտիւս երեւեցան, զայս և մարդիկ ընդ Աստուծոյ կարացին տեսանել:

Բայց ես յոյժ աղաչեմ զամենեսեան, ինչ որ յերկրէ և այսր է՝ բազում այն է որ քննի իմաստուն մտաց, և սակաւ այն է որ ծածկի ՛ի մենջ. իսկ առ աստուածութիւնն և ոչ քան զական քթթումն՝ անկանի ընդ գիտութեամբ. զի ետ վեմն ըզջուրն՝ զայն գիտեմք ամենեքեան. ո՞րպէս ետ, ծածկեալ ՛ի մենջ. ո՞րպէս երթայր զհետ նոցա, թարքմանէ մեզ Պաւղոս. զիա՞րդ գնայր առանց ոտից, զայն և ոչ Պաւղոս գիտէր. նոյն իսկ Պաւղոս զվերանալն իւր յերկինս՝ զնշան ճանապարհին եթէ հարցանես՝ ոչ գիտէ պատմել: Զի եկն Մովսէս ՛ի մեռելոց մարմնով՝ հաւատամք ճշմարիտ. ո՞րպէս եկն, և ոչ ինքն Մովսէս գիտէ: Հաւատամք եթէ կերան անմարմինքն զճաշն Աբրահամու. նոյնպէս հաւատաամք եթէ եկին Մովսէս եւ Եղիա առ տէրն մեր ՛ի Թաբովր. և եթէ ոք յայսամէ յերկբայս լինի, երեք սիւնքն մեզ վկայեն դարձեալ. և եթէ այլ ոք անհանճար մտօք ասիցէ, եթէ կերպարանաւ միայն երեւեցան, այդմ չէ հնար, մի՛ հաւատար. ստուեր ՛ի հայելւոջ երեւին բանք. ոչ ստեն աստուածային գիրք՝ ուր առակն է. ոչ ՛ի մարդկայնէ խնդրեն վկայ, այլ մտաց իմացուցանեն զմեկնութիւն բանին. իսկ ուր ճշմարտութիւնն է, յայտնի երեւի պարզաբանութիւնն:

Ասաց Եսայի. Տեսի զտէր յաթոռ բարձրութեան. ճշմարիտ էր տէսիլն. այլ ոչ զորպիսութիւնն կարէր տեսիլն ցուցանել մեզ. ուր կամի Աստուած՝ առակօք խօսի ընդ ծառայս իւր մարգարէս. և ուր եւս խոնարհութեամբ խօսի՝ և զինքն թանձրացուցանէ, որչափ բաւէ մեր բնութիւնս տեսանել. և վկայս ածէ հրաշակերտս և ՛ի հրեշտակաց և ՛ի մարդկանէ արդարոց. է զի ՛ի կենդանեաց եւ է զի ՛ի մեռելոց: Սոյնպես և յայժամ տեղւոջ բազում ինչ նշանս արար Աստուած ՛ի ձեռն Մովսէսի, և մեծարեաց զնա քան զամենայն մարգարէսն. զսա յարոյց ՛ի մեռելոց, զսա տեաաք զի կայր և խօսէր ընդ Քրիստոսի, որպէս տեսաքն և վկայեմք. որպիսութիւն յարութեան նորա՝ տեառն միայն յայտնի: Այլ զի եկին Մովսէս և Եղիա և խօսեցան ընդ Քրիստոսի, և տեսին երեք առաքեալքն, վկայեմք ճշմարիտ բանից նոցա. և որ յաչս մեր անհնար է, Աստուծոյ ամենայն ինչ հնարաւոր է:

Այլ վասն լերինն գեղեցկութեան և վայրացն վայելչութեան՝ եթէ կամիք ախորժելով ունկն դնել. սակաւիկ մի երկրորդեցից ձեզ զտեսիլ ցանկալի տեղւոյն: Լսելով յաւետարանէն գիտէք ամենեքեան զտեղին բայց մեր և անձամբ իսկ հասեալ և աչօք տեսեալ, ոչ հատուկ միայն առանձինն, այլ բազում ընկերակցօք. որոց և կա՛մ իսկ եղեւ ոմանց մնալ ՛ի լերինն, ոչ ըստ մարնոյ ախորժութեամբ բաղձանաց, այլ առ գութ սիրոյն Քրիստոսի: Քանզի բնակեալ են անդ բազմութիւն սքանչելի եղբարց, որք հոգւով յաճախագոյն վարին՝ քան թէ մարմնով: Քանզի թէ ըստ մարմնասէր մտաց ոք հայի ՛ի տեղի անդ՝ վայելչագոյն երեւի քան զտեսիլս բազում լերանց. նախ զի նիստ նորա է ՛ի մեծ դաշտի միոջ յերկրին Գալիլեացւոց, և այլ լեառն ամենեւին հուպ ոչ գոյ ՛ի նմա, բայց տեսանելով հեռագոյն. և ինքն է բարձր և բոլորանիստ. և շուրջ զիւրեւ ունի ինքնաբուխ գուբս ջրոց և խիտ առ խիստ ծառատունկս բազումս՝ որք պտղաբերին յանձրեւաբուղխ ամպոց, և լինին ազգի ազգի միրգք քաղցրահամք. և բազումք և այլ համադամք անուշութեան. որթք գինեբերք, որ իբրեւ թագաւորաց ըմպել արժանիք. զդէմս լերին յաճախագոյն ծառք ձիթենիք և եղջիւրենիք. չորեքեան օդք ՛ի նա շնչելով, յոլովագոյն

հիւսւսի զօրանայ ՛ի նա: Եւ շաւիղն ընդ որ տեառնն ելեալ է, յոյժ ողորդ է ելն, այսր և անդր մանուածով արարեալ ճանապարհ. ով և կամի ելանել կալ յաղօթս, դիւրաւ զելսն ՛ի վեր առնիցէ: Յորժամ ելանէ ոք ՛ի բուն գագաթն լերինն, բոլոր դաշտն առհասարակ յայտնի երեւի, յարեւելից կողմանէ մինչեւ ՛ի Հորդանան գետ. յարեւմուտս՝ մինչեւ ՛ի ծովն մեծ յաշխարհն Ծայդանացւոց, ՛ի հիւսւսի՝ մինչեւ ՛ի ծովն Տիբերեայ, ՛ի հարաւ՝ մինչեւ յայգին Նաբովթայ եզրայելացւոյ. և ամենայն բազմութիւն վայրացն նստի գեւղ առ գեւղ և ագարակ առ ագարակ, և բազում քաղաքք ՛ի մեջ նոցա. և ինքն կատար լերինն՝ հովտաձեւ գոգացեալ. գոն և ծառք սակաւագոյնք և թանձրահող բազում ՛ի նա:

Եւ ՛ի տեղւոջն ուր երեւեցաւ նոցա տէր լուսաւոր պայծառութեամբն, յարեւելից կողմանէ հովտացն, յետ բանիցն Պետրոսի՝ հեառգոյն ՛ի միմեանց շինեալ երիս եկեղեցիս, և ունին պաշտօնեայս բազումս, զատեալք և որոշեալք յամենայն մարմնաւոր ցանկութեանց. թէպէտ և կեան մարմնով, այլ ոչ վարին ըստ մարմնոյ քնքշանաց. այնպիսի են առաքինիք՝ զի և կարծէ ոք ոչ զնոցանէ թէ շարժեսցէ զնոսա կարոտութիւն մարնոյ. ոչ երբէք ընկալան յումեքէ ոսկի կամ արծաթ կամ հանդերձ, կամ բնաւ որ ինչ պիտոյ է մարմնոյ. այլ որպէս հաճոյ թուեցաւ միաբանելոց ամենեցուն՝ առն իւրաքանչիւր արարեալ փայտատ երկմտանի, և այնիւ խարխարեալ յուզեն զթանձրահող հովտացն, սերմանելով ՛ի նմա ցորեան և գարիս, և թէ այլ ունդք իցեն, ՛ի պէստ կելոյ մարդկան. և ՛ի չափ հասեալ հասկացն՝ ծայրախուզ հնձելով ոտնաշուփ կասեալ մարդացի տան հողմոցն հոսելով զարդիւնս շեղջոցն. և արկեալ ՛ի շտեմարանս, զնոյն դարձեալ ինքեանք լեսուն ՛ի ձեռն երկանի. մեծաւ տաժանութեամբ օր ըստ օրէ պատրաստեն զհարկաւոր կերակրիկն. և դարմանին հացիւ և ջրով լոկով, և աղիւ համեմելով, զոր և խորտիկն անուանեն: Առնեն և այլ յաւելուած յանուշութիւն կերակրոց. ՛ի ձմեռնային ժամանակի քաղեն զնիւ լերինն և թթուեցուցանեն աղիւ և ջրով և զոպայիւ. և որպէս ինքեանք իսկ ասեն, կարի օգտակար է ՛ի տապ աւուրս խորշակի: Եւ չորքոտանի ամենեւին ինչ ՛ի վեր ՛ի լեառնն ոչ ելանէ. այնպէս սուրբ պահեն զելս ճանապարհին, իբրեւ թէ ժողովք հրեշտակաց իցեն և ոչ մարդկան. քանզի են իսկ արդարեւ իբրեւ զանմարմինս: Չիք նոցա եւղ յամանս վասն կերակրոց. բայց եթէ ՛ի ծախս անշեջ կանթեղաց որ հանապազորդ վառեալ այրին յերիս եկեղեցիսն: Չիք նոցա գինի ՛ի սափորս, բայց եթէ ՛ի սպաս տերունական բաժակին: Չիք նոցա դարման պաճուճանաց ՛ի պետս հիւանդաց և ոչ պատրաստութիւնք վասն օտարաց. այլ օտարաց և ընտանեաց հասարակ է նոցա միաբանութիւն. իբր ոչ եթէ ինքեանք մարդատեացք ինչ են, այլ մարտ եղեալ կռուին ընդ ապստամբ մարմնոյս, եթէ գուցէ զասպարէզսն չկալեալ ուղիղ՝ զհեծեալն քարավեժ առնիցէ: Վասն որոյ և ո՛չ կամին հանապազ ճաշակել. այլ սովորութիւն է նոցա բնական ամարանի ագանելով, և ձմերանի հաւաքելով զաւուրս շաբաթուն, իսկ որ հզօրագոյնքն են ՛ի նոսա՝ զողջոյն շաբաթն ձգեալ ՛ի գլուխ տանին: Ապա եթէ ոք երթայր ՛ի հեռաստանէ առ սէր սուրբ ժողովոյն, կամ եղեւ ամենեցուն ՛ի սովորականն լուծանել բերան. կարի յոյժ փոյթ յանձին ունին ՛ի հոգեւոր կերակուրն, զի մի՛ երբեք դադարեսցին ՛ի ճաշակելոյ. թէպէտ և հանապազ ուտեն անյագութեամբ՝ եւս աաւել քաղցնուն և ծարաւին: Ոչ միայն զհարիւր և զյիսուն սաղմոսն արկեալ ՛ի վայր ձայնիւ, այլ բովանդակ զսուրբ

կտակարանս եկեղեցւոյ, որով փառավորեալ և ահաւոր ձայնիւք շքեղացուցանեն զսուրբ եկեղեցիսն ՛ի լերին անդ: է զոր ընթեռնուն բանիւք, և է զոր պաշտեն փոփոխական ձայնիւք, զդադարումն ոչ երբէք առնուլ յազելով՝ փոխանորդութեամբք միմեանց գունդք գունդք աբեղայիցն, յերիս եկեղեցիս բաժանելով հասարակութեամբ առանց կատարելոյ ունին զկարգ պաշտամանն, զտունջեանն և զգիշերուոյ. իսկ զերեկունն և զառաւօտին ժամն՝ ոչ եւս փոխանակաւ յաջորդութեամբ միմեանց, այլ միաբանելով ընդ միմեանս լինի բազմութիւն ժողուոյն վեցերորդ քան զայլոց ժամուցն: Եւ մի յերիս եկեղեցիս մեծագոյն է քան զերկուսն, զոր և Տերունեանն իսկ անուանեն. և երկուս անդ եդեալ են զնշխարս առաքելոցն, որք և հիմնարկեցին իսկ զտեղին այնօր՝ ասելով զանուն երից տաղաւարացն. և անունեն զոնսա վկայարանս սորբս, և յիշատակեն զնոսա յանուն Մովսէսի և Եղիայի. և զբոլոր աղօթսն ՛ի կիւրակէին կատարեն. իսկ յերկուսն եւս երթան և անդ զԱստուած փառաւորեն: Եւ են ամենեքեան մաշկազգեացք, գիտեն և ձեռնակերտիկ արուեստ. ոմն է որ սփիւրիդն առնէ, և ոմանք զնոյն նիւթս սապատս գործեն. եթէ այլ ինչ պետք են՝ գործեն, ընդ լեառնն ՛ի վայր իջանելով. և զամենայն զինչ և գործեն զարուեստն՝ ոչ յայլ ինչ պետս օգտի, այլ ՛ի գինս ձիթոյ կանթեղացն հանապազորդ վառման և ի ծախս օդենեացն, ուստի զմաշկեղեն հանդերձիկն ձեւեն, նովին և զհողաբիրսն հայթայթեն: Դարձեալ հարկարուք են միմեանց սիրով. քանզի գոն ՛ի միջի նոցա օտարատունք, և յիւրաքանչիւր վաստակոց անդր հարկին. են ՛ի նոսա ծերագոյնք, որք ոչ հարկին զպէստս անձանց վճարել միաբան. վասն այնպիսեացն առաւել հոգ տանին քան անձանց. ծասն զի հրեշտականմանք են, ոչ միայն արտաքին պիտոյիւքն սիրեն զմիմեանս, այլ և զծածկութիւն խորհրդոց իւրաքանչիւր ոք ոչ թաքուցանէ յընկերէ. եթէ յանկարծ շարժեցան միտք ուրուք յիշելով զկերակուր տենչալիս, յայտնէ զախտն իւր միւսումն որ լաւագոյն է քան զնա. միաբանութեամբ աղօթս արարեալ ՛ի վերայ՝ վաղվաղակի եկն յառողջութիւն անցաւութեան. քանզի և ինքն իսկ որ հիւանդացաւ՝ տեղեկագոյն գիտէ կռուել ընդ եկամուտ չարտին խորհրդոց, մանաւանդ զի փորձիւ իսկ զչափ առեալ էր յառաջագոյն, եթէ ընդ կերակուրս մտանեն ամենայն մեղք ՛ի բնութիւն մարդոյն. եթէ զայն դուռն մեղաց փակէ ոք, բազում վնասք արգելուն ՛ի նմանէ. զոր ոմանք բազմագլուխ գազան կարդացին զպարարումն որովայնի: Տեսե՞ր, և նոքա նախ զնա սպանին, և յայլ եւս ՛ի վնասարար գլխոց նորա՝ աներկեւղք դադարեցին ՛ի լերին անդ, զի յերկրաւոր բարձրութենէն յերկնաւոր բարձրութիւնսն առ տէրն իւրեանց կարասցեն վերաբերել, որպէս Մովսէսն եւ Եղիայն փառօք երեւեցան տեառն ՛ի նմին լերին:

Եւ ես տառապեալս քան զամենայն մարդ, որ հետեւեցայ հետիոտս ընդ տերունեան շաւիղն ՛ի լեառն անդ, եւ աչօք տեսի զժողով սքանչելի եղբարց, աղաչեմ զընթերցողդ եւ զլսողսդ, աղօթս արարէք ՛ի վերայ իմ եւ ձեր հասարակ. ընդ նոսա ապրեսցուք յահաւոր դատաստանացն Աստուծոյ, եւ երկնից արքայութեանն արժանի լինել ՛ի Քրիստոս Յիսուս ՛ի տէր մեր. որում փառք յավիտեանս յավիտենից:

ՀՈԳԵՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

. Գ /

A

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության եվ Քարոզչության Կենտրոն

ԵՂԻՇԷԻ ՔԱՀԱՆԱՅԻ

ՃԱՌ
ՅԱՅԼԱԿԵՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

<,=

Ի Վենետիկ

1854

ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱ

ՃԱՌ ՏԻՐՈՋ ՊԱՅՇԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

>,?

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
1999

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

fghij

ՏԻՐՈՋ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱՅԻ ՃԱՌԸ

Սրբասեր Տեր Եղիշե քահանայի՝ ճգնավոր կրոնավորի ու մենակյացի [խոսքը] Թաբոր լեռան վրա Պետրոսյանց առջև Տիրոջ հայտնության մասին, Վարդավառի Մեծ օրվա առթիվ

Մինչ նրանք՝ [Հիսուս և Իր աշակերտնե-րը] ճանապարհ էին գնում, մեր Տերն Իր տասներկու [աշակերտներին] ասաց՝ «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում, ո՞վ կամ ո՞րտեղից եմ»: Հայտնեցին Նրան, որ դրսինները Նրա մասին տարբեր կարծիքների են: «Իսկ դո՞ւք իմ մասին ինչ եք ասում»: Պետրոսն առաջ եկավ ու ասաց՝ «Դու ես Քրիստոսը՝ Կենդանի Աստծու Որդին» (Մատթ. ԺԶ 16): Մեր Տերը գովեց նրա գեղեցիկ վկայությունը և ասաց, որ այդ հայտնությունը Պետրոսին Հայրը շնորհեց (Մատթ. ԺԶ 13-17, Մարկ. Ը 27-30, Ղուկ. Թ 18-20):

Ապա Պետրոսն այս ու այն կողմ էր դեգե-րում, կարծելով, թե Քրիստոս չի մեռնելու՝ լավ չիմանալով, որ Նրա մահով է մահը մեռ-նելու և աշխարհը՝ կենդանանալու: Մեր Տերն էլ տեսնելով, որ Սիմոնը երկնային երանու-թյունները մոռացել է, մորմոքալից խոսքեր հնչեցրեց նրա լսելիքին, որից էլ նա ահռելի երկյուղով ամբողջովին սարսռաց, երբ Տիրո-ջից լսեց հետևյալը՝ «Մարդու Որդին պետք է շատ չարչարանքներ հանձն առնի, մեռնի ու երրորդ օրը հարություն առնի» (Մատթ. ԺԶ 21, Մարկ. Ը 31, Ղուկ. Թ 22): [Տերը] մահը հի-շատակելով հույժ տրտմեցրեց, սակայն հա-րության ավետիսով առավել մեծ չափով մխիթարեց:

Իսկ Պետրոսը Նրա մահվան լուրի պատ-ճառած մեծ տագնապից հարության ավետիսը մոռացավ: Նույնն ենք տեսնում նաև մեր բնության մեջ: Մեր մեղքերի բնության հին ախտերը թույլ չեն տալիս, որ մեր արագահաս նոր կյանքը ներս գա: Ճիշտ այդպես ժողովրդի որդիներն էլ իրենց հին կուրությամբ նախան-ձում էին մեր այս նոր կյանքի հայտնվելուն՝ Նրան Եղիա կամ Երեմիա կամ նախկին մար-գարեներից մեկը կոչելով, որպես չար մխի-թարություն իրենց մահկանացու անձերին:

Մահկանացու էին կարծում ժողովրդի մտքի մեջ տարակուսանքներ գցելով Նրա մա-սին, Ով եկել էր մարգարեների խոսքերն իրա-կանացնելու:

Պետրոսն էլ էր նույն ախտով տառապում: Նա մի գեղեցիկ վկայություն մատուցեց, սա-կայն դրա խորհուրդը չարով նսեմացրեց: Անզգայի պես սաստկությամբ ընդդեմ ելավ, ասելով՝ «Քավ լիցի Քեզ, Տե՛ր, այդ Քեզ չի լինի» (Մատթ. ԺԶ 22): [Եվ սրանով] իր բոլոր նախկին մտածումները դուրս թափեց և ջնջեց մինչ այդ արած իր գեղեցիկ վկայությունը: Հայրը նրան Որդու ամբողջ Աստվածությունը հայտնեց, քանզի Իր Աստվածությամբ և մարդեղությամբ չարչարվելու էր և ինչպես չարչարվելու էր, նույնպես էլ և հարություն էր առնելու: Այս ավետիսից բոլորը պիտի ուրախանային և ոչ թե ձգտեին զրկել Նրան երկուսից էլ՝ [մահվանից ու հարությունից]:

-Տեսա՞ր. որտեղ որ [Պետրոսը] Աստծունը խոսեց, այնտեղ [Տերը] նրան երանի տվեց, իսկ որտեղ որ հին մարդու պես խորհեց՝ այնտեղ նրան հայտնապես ասաց. «Դե՛ն գնա, սատանա՛, որովհետև դու Աստծունը չես խորհում, այլ՝ մարդկանցը» (տե՛ս Մարկ. Ը 33):

Մարդու խորհուրդները ծխի պես անպի-տան են. արդ [Տերը] սաստեց այդ ծուխը և նոր մարդու միջից այն անհետ կորցրեց, որպեսզի ինքնածագ Լույսն առանց ապականացու խոր-հրդի լինի: Սաստեց անգամ նրանց, ովքեր արքայության որդիներ էին կոչվելու ու Իրե-նից վանեց, որպեսզի Իր Հոր կամքն առանց գայթակղության առիթ տալու կատարի: Սո-վորեցրեց նրանց իրենց անձերում չարչա-րանքներ կրել և այնտեղ իսկ հարության հույ-սով նրանց հաստատեց. ոչ միայն նրանով, ինչ հետո էր լինելու, այլ որպեսզի նույն այդ ժա-մանակ Իր երկրորդ գալստյան օրինակը փոքրիշատե ցույց տա: Ինչպես որ անսուտ վկայությամբ ասել է՝ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, թե նրանցից, որ այստեղ են, կան ոմանք, որոնք մահ չպիտի ճաշակեն, մինչև որ տեսնեն Աստծու արքայությունը՝ զորությամբ եկած» (Մարկ. Ը 39):

Այս տեղում՝ ավետարանագիրների խոս-քերը ոմանց մի փոքր հակասական են թվում: Մատթեոսը «վեց օրից» հետո է ասում, իսկ Ղուկասն ու Մարկոսը՝ «ութ օրից»: Բայց մենք բավական ենք համարում ոմանց ասածը, ըստ որի Մատթեոսը չի հաշվել առաջին և վերջին օրերը և միայն միջանկյալ օրերն է հաշվել, իսկ մյուս երկուսը հաշվել են նաև խոստումը տալու և երևալու օրերը: Եվ բոլորին հաճելի թվաց ընդունել այս, և մենք էլ սրան համա-ձայնելով միաբանվեցինք նրանց:

Ինչպես որ Մարկոս ավետարանագիրն է նշում՝ «Եվ այս խոսքերից մոտ ութ[1] օր հետո Հիսուս Իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբ-սին և Հովհաննեսին ու առանձին նրանց հանեց մի բարձր լեռան վրա և նրանց առաջ պայծա-ռակերպվեց: Եվ Նրա զգեստները փայլուն, խիստ սպիտակ դարձան, այնպես որ երկրի վրա ոչ մի լվացք անող չի կարող այդքան սպիտակեցնել: Եվ նրանց երևացին Մովսեսն ու Եղիան, ու նրանք խոսում էին Հիսուսի հետ Նրա վախճանի մասին, որ տեղի պիտի ունե-նար Երուսաղեմում» (Մատթ. ԺԷ 1-4, Մարկ. Թ 1-3, Ղուկ. Թ 28-31):

Մինչ այս տեղը սուրբ ավետարանագիրը կրկնում է [Մատթեոսին՝ պատմելով] երկնա-յին հայտնության մասին:

Աստվածաշունչ Մատյանի ամեն մի խոսք հույժ զարմանալի է մեր հողեղեն բնության համար: Իսկ այդպիսի երկնավոր երևման ժա-մանակ ոչ միայն մենք ենք տկարանում, այլև՝ երկնքի անմարմին զորությունները:

Ամբողջ ժամանակը, որ մեր Տերն աշխար-հում շրջեց, առավելապես ըստ մարդկային խոնարհության անցկացրեց, իսկ այդ լեռան վրա Իր ահավորությամբ հրեշտակներին էլ գերազանցեց: Ոչ միայն, որովհետև լուսեղեն փառքով երևաց, այլ նաև, որ խորտակեց մահ-վան դռներն ու իրականացրեց առաքյալներին տված Իր խոստումները: Ասված է, որ՝ Աստ-ված այսպես սահմանեց, որպեսզի առանց մեզ ոչինչ չկատարվի: Դավիթն էլ աղաղակում է և ասում՝ «Արդարները պիտի սպասեն, մինչև որ հատուցման արժանացնես ինձ» (Սաղմ. ՃԽԱ 8): Նաև երկրորդ անգամ մեծերից մինչև փոք-րերին [ազդարարում է], որ վերջում ոչ ոքի զղջումն ընդունելի չի լինի: Ինչպես որ մի շաբաթում հաստատեց բոլոր արածաներին, [այնպես էլ] մի օրում երկինքն ու երկիրը կանցնեն, և ամեն մարդ կստանա ըստ իր կատարածի:

Արդ Մովսեսին ու Եղիային էլ Իր հետ վկայության համար բերեց, որպեսզի Մովսե-սով մեռելների հարությունը ցույց տա, իսկ Եղիայի միջոցով՝ Իր Աստվածության սիրելիի մահը: Դրան Եղիան քաջատեղյակ էր ու տեն-չում էր, թե երբ պիտի տեսներ:

Այնտեղ ճշմարիտ արքայություն էր, քա-նի որ այնտեղ միասնական Երրորդությունը լիալիր էր: Աստված ինչ-որ վայրում չի լի-նում, [այսինքն՝ տարածական չէ], սակայն երևաց մարմնավորներին որպես՝ տարածա-կան: Ու այն տեղը, ուր Աստված հայտնվեց, առանց վարանելու [կարելի է] արքայություն կոչել, քանի որ արքայությունը հենց այն է, ուր Աստվածությունն է երևում:

Իսկ դու, ո՛վ իմ տեր Պետրոս, ինչո՞ւ ես այդ մահվանից զարհուրել, որից բոլոր բա-րիքներն են աշխարհին զեղվում: Նույնը հենց հիմա ուրիշներից էլ ես լսելու, որովհետև ավետարանագիրն ասում է. «Մովսեսն ու Եղի-ան Նրա վախճանի մասին էին խոսում, որ տե-ղի պիտի ունենար Երուսաղեմում» (Ղուկ. Թ 31):

Արդ, երբ Պետրոսը տեսավ, որ մեռած-ներն ու կենդանիները նույն բաներն են քարո-զում, և Տերն Ինքն Իր կամքով է եկել Հոր միաբանությամբ, առավել ևս նեղվեց նախկին երկյուղի մեջ, քանզի հաստատ իմացավ, որ մեր Տերը մահվանից չի խուսափելու, և ան-հնար է, որ իրենք նրան թողնեն ու փախչեն: Նաև այն էր քաջ գիտակցում, որ երբ Քրիս-տոս այս լեռից իջնի, ուղիղ Երուսաղեմ կգնա, ուր իրենց համար իսկ մահվան վտանգ կար: Իր այս խղճմտանքի պատճառով սկսեց Տիրոջն ասել, որ հրամայի նրանցից յուրաքանչյուրի համար տաղավարներ պատրաստել և Մովսե-սին ու Եղիային այնտեղից չուղարկի: Որպես թե մեկը նրանց մտքում ասի, թե այդ լեռան

[1] Ընկալյալ բնա□րում սակայն «վեց» օր (Մարկ. Թ 1)

վրա մահը իշխանություն չունի, և որ մահն այդ լեռը վախենում էր բարձրանալ: Հրեա-ներն իսկ չեն հանդգնի այստեղ [ելնել]:

Եթե անգամ մենք Երուսաղեմ գնանք, երբ Մովսեսն ու Եղիան մեզ հետ լինեն, քահանա-ները չեն կարողանա մեզ նեղել, որովհետև նրանց սաստիկ ահին չափազանց տեղյակ են: Սա այն Մովսեսն է, որ անապատում նրանցից բազում հազարների է կոտորել. նրա հրամա-նով է գետինը բացվել ու նրանց բանակները կուլ տվել: Եղիայի մասին էլ անտեղյակ չեն. եթե նրա դեմ դույզն-ինչ խոժոռվեն, նա եր-կինքը կկապի ու նրանցից անձրևը կկտրի: Իսկ եթե է՛լ ավելի հանդգնեն, երկնքից հուր կի-ջեցնի ու ճշմարտության թշնամիներին կայ-րի:

Շատ տեղերից սրա զորության ահը գի-տեն, [գիտեն] ոչ միայն հիշյալ քահանաները, այլև հայտնապես նրանց ուրացողները: Իրենց ութ հարյուր քրմերի սատակումը չեն մոռա-ցել, որոնց ինքն իր ձեռքով Կիշոնի հեղեղա-տում կոտորեց: Եվ եթե Աքաաբ թագավորն էր նրանից երկնչում, որքա՞ն առավել՝ Աննան ու Կայիափան, ովքեր Աքաաբից շատ ավելի տկար էին:

Նրանց այս բոլոր կասկածների պատճա-ռով, որ մարդկորեն երկնչում էին, Հայրը, նրանց հույժ ողորմելով, վերևից ասում է. «Դա է իմ սիրելի Որդին, դրա՛ն լսեցեք» (Մարկ. Թ 6):

[Այս խոսքերից] իրենց Տիրոջ երկրային պահապան ծառաները երկյուղի ախտով բռնը-ված [երեսի վրա] ընկան: Երկնային Տերու-թյունը ոչ մեկի կողմից չի պահպանվում, այլ Նա է Իր զորությամբ բոլորին պահում: Եվ դուք տաղավարներ շինելու նեղություն մի՛ քաշեք. եթե շատ եք շոգել, ահա ձեզ ամպ է հովանի տրվել, դրա ներքո զովացեք (Մարկ. Թ 6, Ղուկ. Թ 34):

Երբ այս ձայնը երկնքից նրանց ականջին հասավ, նայեցին ու տեսան միայն Հիսուսին: Ապա նոր կարողացան իմանալ, որ իրենք այն ահից թմրել էին ու չգիտեին՝ ի՛նչ էին խոսում:

Իսկ եթե Գիրքը նրանց «թմրած» է անվա-նում, ապա ինչպե՞ս է, որ Մովսեսին ու Եղիա-յին ճանաչեցին: Պարզ է, որ անմտությունից էին նրանք թմրած և ոչ թե իրենց լսածներից և իմացածներից: Ինչ որ աչքերով էին տեսել՝ ճշմարիտ էր, և ինչ որ ականջներով էին լսել՝ սուտ չէր: Բայց քանի որ ժամը սաստիկ ահար-կու էր, մարդկային բնությունը չկարողացավ երկնավոր բնությունն ըմբռնել: Որովհետև այստեղ-այնտեղ սայթաքում էին, ու ոչ ոք չէր կարող [նրանց] մեղադրել: Քանի որ [անգամ] մեծն Աբրահամը վերին զորություններն ամ-բողջովին իբրև մարդացածներ էր տեսնում, հոգիներին բախվելով՝ չէր կարողանում ճըշ-մարտապես ըմբռնել: Մտքերն այս ու այն կողմ էր տարուբերում. երեք [հոգի] էր տես-նում ու մեկ կարծում և մեկ կարծելով՝ երեքի հետ խոսում. մարդ էին երևում, իսկ նա Աստ-վածի էր կարծում: Եվ հողեղեն բնություն ունե-ցողներից ո՞վ է, որ կարող է ճշմարտապես իմանալ և ճանաչել այդ անբավ մեծությունը, և ոչ միայն մարմնավոր մարդիկ [չէին կա-րող], այլև երկնային ոչ պարզ էությունները: Գիրքը նրանց իրավամբ է «թմրած» անվա-նում:

Նա, ում զորությունից լեռները հալվում են ու անդունդները ցամաքում, և մեր այս թանձրահող երկիրը հիմքից դղրդալով սա-սանվում է, Իր ողորմությամբ խնայում է մեզ, որովհետև Իր ձեռքի գործն ենք, ինչպես ամեն օր ամենքիս, այնպես էլ և նրանց, ովքեր այն օրը լեռան վրա երկնչեցին:

Գիտենք, որ Աստվածաշունչ Մատյանը վայրիվերո չի խոսում, այլ ամեն բան ճշմար-տապես է պատմում: Բայց կան խոսքեր, որ ինչպես ասվում են, այնպես էլ հասկացվում են, սակայն անհրաժեշտ է խոսքի ծածուկ միտ-քը բացահայտել, որպեսզի [լսողները] հավատ-քով ընդունեն իրենց անձերի փրկության համար:

Ասում է, որ Պետրոսյանք Մովսեսին ու Եղիային ճանաչեցին: Եթե ասենք՝ այո՛, ճանա-չեցին, ապա [հարց է], թե ինչպե՞ս «ճանա-չեցին» մի բան, որ չգիտեին:

Խոսքի զորությունը քա՛ջ իմացիր և տեր Պետրոսի պես մոռացկոտ մի՛ լինիր: Այս ճառի սկի՛զբը կարդա. [ուր տիրոջ պայծառակեր-պության վայրը] «արքայություն» կոչվեց: Այնտեղ [արքայությունում] մարդկային մո-ռացություն չկա, այլ՝ անմոռաց հիշողու-թյուն: Որովհետև մեզ համար այն տեղը ար-քայություն էր լոկ նմանությամբ, իսկ Աստ-վածության համար՝ բովանդակ լրումով:

Տերը մեզ ոչ թե բնական գիտություններ սովորեցրեց, այլ՝ իմացական գիտություն: Այրերը կարծես երկրից երկինք փոխադրվե-ցին, դրա համար էլ իրենց այստեղի իմացու-թյունը «թմրություն» անվանեցին: Անտեսա-նելին ճանաչելով՝ «արքայության մանուկ-ներ» կոչվեցին, ինչպես նաև՝ «մարգարեու-թյան մանուկներ»: [Տերը] կրթեց նրանց գի-տությամբ, որպեսզի [մենք] այլևս չկարո-տենք երկնային ժառանգությանը ու անծա-նոթ մնանք առաջիններին, միջիններին ու վերջիններին:

Երբ արժանավոր մարդիկ դառնան արքա-յության զավակներ, այնժամ աստվածատուր շնորհով [նրանց] իմացություն կբաշխվի: Ինչ որ այժմ մտքով ենք իմանում, «հայելու օրի-նակ» է անվանվում (տե՛ս Ա Կոր. ԺԲ 12): Իսկ երբ մեզանից մարմնական քողը վերցվի, Աստվածությունը կտեսնենք դեմ հանդիման, այնպես, ինչպես որ կա: Կտեսնենք հրեշտակնե-րի ամբողջ բնությունը, և անծանոթներին, ինչպես ինքներս մեզ [կճանաչենք], դրսից՝ արտաքին երեսը, իսկ մտովի՝ արտաքինն ու ներքինը: Եվ քանի որ Պետրոսյանք դեռևս մարմնավոր էին, նրանց հոգիների մեջ իմա-ցության շնորհի նշույլ կաթեցրեց. որով և Մովսեսին ու Եղիային լիովին ճանաչեցին: Իսկ այն, որ այնտեղ վայրիվերո խոսեցին՝ արտաքին զգացողությունից էր:

Եվ մի այլ կողմով ևս Աստված նրանց ողորմեց, այն է, որ Մովսեսին ու Եղիային հաստատապես ճանաչեցին: Եվ որպեսզի նրանց մտքում [կասկածի] մի բիծ էլ չմնար, նրանց խոսքերով ևս քաջ ծանոթություն հաստատե-ցին: Նրանք Տիրոջ հետ հայտնապես էին խո-սում, իսկ սրանք նրանց ամեն մի խոսքը ուշադրությամբ լսում էին: Եվ ինչ որ լսեցին՝ նույնը մտապահեցին, որովետև եթե մոռա-ցած լինեին, ապա ավետարանիչներն էլ չէին գրի:

Բայց առջևում այս հարցը դեռևս կա. ի՞նչ էր արդյոք խոսում Մովսեսը Տիրոջ հետ, և կամ Եղիան ի՞նչ էր Նրա առաջ հաստատում:

Ավետարանիչը պատմում է, որ Նրա վախ-ճանի մասին էին խոսում, որ Երուսաղեմում էր տեղի ունենալու: Նրա վախճանը Նրա մահն է, և Նրա մահվամբ եղան երկնային բոլոր բարիքները:

-[Կհարցնես, թե]՝ Մովսեսն Աստծու Որդու մահվան մասին որտե՞ղ է գրել:

Այդպես մի՛ հարցրու, թե՝ որտե՛ղ է գրել. բոլոր օրենքներն ու մարգարեությունները Աստծու Խոսքի մարդանալու մասին են մեզ պատմում՝ [Նրա] չարչարվելու, մեռնելու և հարություն առնելու մասին: Ծննդոց [գրքում ասվում է]՝ «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի» (Բ Օրենք ԺԸ 15), Նոր Կտակարանի օրենսդրության համար: «Ինձ նման» և «Նրան կլսեք» ասելով, իր օրենքը լռեցրեց և հրա-մայեց Տիրոջ օրենքը առաջ մղել՝ մկրտու-թյունը՝ ծովով, ամպով և հրե սյունով, նաև կողի խոցմամբ և վտակաբուխ վեմով:

Եթե իմ ասածը չես ընդունում, ապա առաքյալներինն անշուշտ կընդունես: Ասում է, թե՝ վեմը, որ ժողովրդի հետ էր գնում, Ինքը Քրիստոսն էր (Ա Կոր. Ժ 4), որ կար խա-չափայտին, հրաշքներ գործող գավազանի հետ, անարատի մահվամբ. Եգիպտոսում գառ-ների արյան թափվելով, ու մահվան զորու-թյամբ փրկելով նրանց գերությունից: Իսկ հարության ավետիսը, Հովսեփի սուրբ ոսկոր-ներն էին նրանց տալիս: Մեռածները կենդա-նիներին մահվանից փրկեցին: Նրա համբառ-նալու մասին մեծն Դավիթը գրել է՝ «Աստված բարձրացավ օրհնությամբ, և մեր Տերը՝ շե-փորի ձայնով» (Սաղմ. ԽՁ 6):

Այս բոլորը Եղիան էլ գիտեր, որովհետև նույն Հոգին էր ամենքի մեջ խոսում. բոլորն էլ մեկ օրինակ գիտեին: Մեկը քիչ խոսքերով էր այս ասում, մյուսը բազմապիսի ապա-ցույցներ էր բերում: Սակայն զորությամբ նույնն էին հաստատում: Մովսեսն ու Եղիան այս ամենը Տիրոջ հետ խոսում էին, որպեսզի առաքյալները նրանց անսուտ խոսքերի վկա-ները լինեին, թե՝ արդեն հասել է նրանց վրա մահվան դատավճիռը: Ու թող ոչ ոք չհամար-ձակվի Նրա խոսքերին դեմ կանգնել: Եվ, ինչ-պես դրանից հետո հայտնի դարձավ, ոչ ոք Տի-րոջ առջև այլևս չհամարձակվեց նույն խոս-քերը կրկնել:

Բայց դու որ լսում ես Մովսեսյանց գա-լըստյան և Տիրոջ հետ նրանց խոսելու մասին, առանց ծանր ու թեթև անելու անփութորեն մի՛ նայիր դրան ու փոքր բան չիմանաս, և դա-տարկ

շաղակրատության վայր էլ չհամարես: Լա՛վ մտածիր ու տե՛ս պատվական այրերին: Խորհի՛ր ու [կհասկանաս, որ] այն տեղը երկ-րային բոլոր արքունիքներին գերազանցում էր: Եվ կամ ո՞ւմ առաջ էին կանգնած: Կամ ով-քեր որ կանգնած էին, եթե երկնային մեծու-թյուն չունենային՝ չէին կարողանա երկնավոր Տիրոջ առաջ կանգնել ու Նրա հետ խոսել: Բայց [Տերն] Իր սիրով նրանց բերեց, Իր ողորմությամբ Իրեն մոտեցրեց, և ներելով ունկնդրեց նրանց, դրա համար էլ կարողացան երկար խոսել:

Ինձ թվում է, թե իրենց ազգատոհմի հա-մար չափազանց շատ էին ողբում, միգուցե քաղցր արմատի[2] սիրույն՝ գավառների հան-դեպ գութ ունեին: Ու թեև նրանցից առաջ բա-զում արդարներ են եղել, սակայն տեսնում էին, որ այդ ժամանակներում բոլորն էլ չար են: Հաստատեցին, որ ժամանակը հասել էր, և օրը մոտեցել, երբ իրենց առկայծ ճրագը մա-ռելու էր, և ջախջախված եղեգը արմատախիլ էր արվելու (տե՛ս Մատթ. ԺԲ 20): Մտքում ծածուկ իրենց ազգի համար էին ողբում: Տե-սան, որ իրենց ամեն ինչը հեթանոսներին է անցնելու, ու իրենք պետք է լոկ իբրև անշունչ մարմիններ մնան: Տեսան նաև Աստծու բարե-րարությունը, որ ոչ մեկի կորուստը չի կամե-նում և համարձակվեցին Տիրոջը հարցնել, Ով նրանց սրտի գաղտնիքները գիտեր: Ասացին՝ արդյոք հնարավոր է, որ այլ կերպ լինի, որ Դու չմեռնես, ազգը չկորչի և հեթանոսներն էլ փրկվեն: Իսկ մեր Տերն Իր ծառաներին չտրտմեցրեց, այլ այդ հարցի պատասխանն Իր Հոր կամքին թողեց:

-Գուցե ինձ ասեք. «Այդ որտեղի՞ց համար-ձակվեցիր չգրված բաների մասին խոսել»:

Ես իսկ տեսա Տիրոջը, որ լալիս էր Երու-սաղեմի վրա և սաստիկ ողբում Իր ընտրյալ ազգի համար: Այսօրվա [լացը] նույնպես մեծ էր, քանզի երեսնիվայր ընկել էր Աստծու առ-ջև ու աղոթում էր: Հասարակ մարդ չէր, սա-կայն ողջ գիշեր, Իր ամբողջ զորությամբ [աղոթում էր] մեծ տաժանակրություններով, այնքան որ բավականին քրտինք հոսեց Նրա-նից: Իսկ աղոթքի վերջում Մովսեսյանց հար-ցումը կրկնեց, ասելով՝ «Հա՛յր, եթե կարելի է, թող այս բաժակն Ինձնից հեռու անցնի» (տե՛ս Մատթ. ԻԶ 39): Եվ տեղնուտեղը իրերի խնդի-րըն Իր Հոր կամքին էր հանձնում:

Դարձյալ աղոթքի կանգնեց ու նույն խոս-քերը կրկնեց: Եվ այս է մեզ համար առավել կարևոր, որ սովորենք ինչպե՛ս որ Նա չկամե-ցավ Հոր կամքից դուրս գալ. մենք էլ Նրա կամքից դուրս չգանք: Դրա համար էլ, ինչպես Եղիայանք չկարողացան Տիրոջը մեղադրել, նույնպես և՝ Պետրոսյանք, ովքեր ականատես էին եղել: Եվ ոչ միայն մեղադրողներ չեղան, այլև շնորհակալ եղան Նրան ամբողջ տիեզեր-քով մեկ:

Սա էր Տիրոջ հետ այրերի երկար խոսելու պատճառը, և ոչ միայն Նրա հետ շատ խոսելու, այլև Նրանից բոլորովին չհեռանալու, նաև հարկ եղած դեպքում Նրա հետ մեռնելու: Եվ եթե Մովսեսը չէր կարող կրկին մեռնել, [ապա] Եղիայի համար, եթե Տերը կամենար, հնարավորությունը կար:

Երբ նրանց առաջին հարցումը գլուխ չե-կավ, երկրորդին է՛լ ավելի սաստիկ տենչացին: Սիրելի զորականներից ո՞ր մեկը պատերազ-մից հեռու կմնա, երբ ինքը՝ թագավորը թշնա-մու վրա գնա: Եվ եթե երկրայինները այդպես են անում, ովքեր ավելի հաղթվելու, քան թե հաղթելու երկվություն ունեն, ապա քանի՜ քանիսը երկնավորներից հոժարությամբ Նրան նահատակակից կլինեն, մանավանդ, որ առջևում ոչ թե մահվան կասկած կա, այլ՝ անմահ կյանքի հաղթանակ: Այս պատերազմից ոչ ոքի վայել չէ հեռու մնալ՝ ո՛չ տղամարդ-կանց, ո՛չ կանանց, ո՛չ արդարներին, ո՛չ էլ մե-ղավորներին, թե հնար լինի՝ գուցե նաև երկ-նավորներին:

Բայց ահա, Եղիայի համար թեև շատ անձ-կալի էր Նրան խաչակից լինելը, սակայն Տերը նրան արգելեց, որպեսզի արդարներից ոչ ոք Իր հետ չխաչվի: Որովհետև արդարների հա-մար խաչվելու չէր եկել, այլ՝ բարու՛ [հաղթա-նակի], որի համար էլ համարձակվեց մեռնել, որպեսզի Իր մահով բոլորի մահը խափանի: Եղիային մահից ետ պահեց, որպեսզի տրված պատիվը չկորզի Նրանից: Ոչ միայն Եղիային է արգելում Իրեն մահակից լինել, այլև չի կա-մենում, որ արդարներից մե՛կն իսկ Իր հետ մեռնի. այլ՝ միայն մեղավորներից, այն էլ ոչ թե Իր խոսքով, այլ ում որ քահանայապետնե-

[2] Քաղցր արմատ –ի նկատի ունի Հեսեի արմատը, այսինքն՝ Դավթի ցեղը:

ը կկամենան: Այնժամ թերևս Նրա բարերա-րությունը կերևա, որի մասին ավելի առաջ էլ ասվեց, թե մեզ համար «անօրենների» շարքը դասվեց (տե՛ս Եսեյի ԾԳ 12, Մարկ. ԺԵ 28): Իր սիրուց էր, որ Եղիային խնայեց, որպեսզի ան-մահության պարգևի մեջ մնա և լինի մունե-տիկը Իր երկրորդ գալստյան:

Աստված գիտի՛, թե ի՛նչ է անում. և միայն Ինքն է բարին կատարում: Քեզ համար այն էլ բավարար կլինի, եթե Նրա հույսը վայելել իմանաս, ու երբ քո առջև դուռը բաց անի, եթե կամենաս՝ դու էլ Նրա պես կկարողանաս գործել, ինչպես որ առաքյալների հետ եղավ, և Քրիստոսով մինչև օրս լինում է:

Գիտեմ, որ շատերն են իմ դեմ զայրացած ասում՝ «Մեր Տերն այնտեղ՝ լեռան վրա, արքայությունը ցույց տվեց, իսկ դու եկել մահ-վան ճառ ես մեզ ասում»: Ճառին լա՛վ նայիր ու կհամաձայնես, որ նրանց լեռ բարձրանալը մահվան պատճառի սկիզբը եղավ: Մովսես-յանք էլ նույնը Տիրոջ առաջ կրկնեցին: Եվ [բացի այդ] մենք էլ այս ճառի մեջ արքայու-թյունը տեսանք:

Զգեստը սաստիկ սպիտակ էր և իր պայ-ծառությամբ գերազանցում էր արեգակի ճառագայթներին: Տեղին արժանի զգեստին էլ վայելչություն է պետք: Բայց նրանով էր ար-քայությունը կատարյալ, որ այնտեղ Հայրն ու Որդին են մարդկանց հայտնվել: Պետք է հաս-տատ իմանալ, որ անանց ու հավիտյան այդ-պես է լինելու:

Սակայն զգեստի սպիտակությունը, ան-մահի մահվան մասին մի փոքրիկ ակնարկ է միայն: Բոլոր արարածներն անմխիթար սգի մեջ էին, որովետև Անմահ Աստծու անմահ պատկերը՝ մարդը մահվամբ ընկել էր անփա-ռատ խավարի մեջ: Բոլոր արդարներն ու մե-ղավորները սգում էին՝ կրելով սգո ծանր հանդերձներ, որ խավարի նմանությունն ուներ: Եվ այս արարածներից ոչ ոք չէր կարող աշխարհից սգի ծանրությունը վերացնել. դա միայն Նրա՛ միջոցով էր հնարավոր, Ում մի-ջոցով որ ամեն ինչ եղավ:

Արդ, Իր մահվան համար զարդարվեց ոչ թե երկրային պատվական հանդերձներով, այլ Իր ի բնե ինքնաճագ լույսով, որպեսզի աշ-խարհից խավարի իշխանությունը հալածի ու մարդկանց թախծալի տրտմությունը մխիթա-րի, և հին տրտմության բիծն Իր անապական լույսով սպիտակեցնի: Եվ մարդիկ, որ իրենց սիրելիների մահվան համար տխրում ու մթնում են և կենդանության օրոք գրեթե մահն են ճաշակում, թող նայեն Աստծու Որդու մահվան զվարթությանն ու պայծառությանը, ու թող նրանցից վերանա անհույս տրտմու-թյան սուգը, և հարության հույսով լցվեն ու այլևս մահվանից չսարսափեն, որ արդարնե-րին ու մեղավորներին դողի մեջ է գցել: Նրա համար ենք այստեղ մահվան ճառն ասում, որովհետև սրանով ենք տեսնում երկնքի արքայությունը, որն Իր զորությամբ մեծ հա-մարձակությամբ եկել հասել է: Մահն արհա-մարհում ենք, որովհետև մեր անձերը արքա-յության հույսով են համակվել: Սիրեցինք լե-ռան այն տեղը, ուր մեզ համար կրկնակի հայտնություն եղավ, և դեռ ավելին՝ եռակի.

-Մովսեսին մեռած էինք կարծում, բայց կենդանի տեսանք. նա բերեց հարության ավե-տիսը բոլոր մարմինների համար:

-Կիսահավատ հրեա ազգը Եղիայի հոգին հափշտակված, իսկ մարմինը՝ իբրև մի անպի-տան գոյացություն դեն գցված էր դավանում: Նա էլ եկավ ու երևաց ամբողջական՝ հոգով ու մարմնով, որպեսզի նրանց խղճմտանքը թե-թևացնի, և եթե կամենան՝ ընդունեն:

-Կարծում էինք, թե մահվան թագավորու-թյունը չի անցնի, [սակայն] այնտեղ՝ լեռան վրա, մահը՝ մեռած, իսկ կյանքը թագավո-ռելիս տեսանք:

Եթե ուզում եք, նորից լեռան ճառին կան-դրադառնանք, մանավանդ, որ այն լեռից չենք էլ իջել, ու քանի դեռ այնտեղ ենք, հենց այնտեղի մասին էլ կխոսենք, և այնտեղի խոս-քերով էլ հանդես կգանք, իսկ եթե այն լեռից իջնենք այլ խոսքերի կարիքից դրդված, դար-ձյալ նույն լեռը կբարձրանանք. երկու անգամ լինի, թե երեք, նույնը պիտի անենք, մինչև որ մեր ճառն ավարտվի. և այն լեռան շուրջն էլ կեզրափակվենք:

Բայց առայժմ այնտեղ՝ վերևում, տեր Պետրոսին պետք է հարցնենք. «Այդ լեռն ին-չո՞ւ այդպես սիրեցիր, որ ուզում ես այնտեղ քեզ ու ընկերներիդ համար բնակություն հաս-տատել: Եթե դու ունես գոնե փոքր-ինչ պատ-շաճ պատրվակ թե՛ քո, թե՛ Տիրոջ և թե՛ Մով-սեսի համար, [հիմնավորի՛ր] այնպես, որ դա ինձ տեղին թվա»:

Եթե ասես, թե՝ «Մեռելներից հարություն առավ, դրա համար եմ կամենում, որ այստեղ մնան»: Հարություն առածը եթե տաղավարի կարիք ունի, ապա դա հարություն չպետք է ասել, այլ՝ երազ ու աչքի պատրանք: Ուրեմն տակավին հարություն առածի մասին չտեղե-կացած՝ հարության մի փոքրիկ ճաշակ քեզ ցույց տվեց, և դու, այն տեսնելով, թմրեցիր: Եթե քեզ համար նրանք այդքան փառավոր էին, որ դու նրանց աներկբայորեն ընդունե-ցիր, ապա դու արդարև, առավել ևս էիր նեղ-վում: Սակայն չեմ կարող քեզ մեղադրել, որովհետև դեռևս հրեախառն ես, օրենքներում գրվածները կարդում ես, բայց արժանին ըմբռնել տակավին չես կարողացել:

Մովսեսի դեմքը լեռան վրա շքեղացավ, և ձեր հայրերը չկարողացան նրա բաց երեսին նայել. դու էլ հոգիդ մարմնական այդ վարա-գույրով ես ծածկել: Մովսեսը, դեմքը ծած-կելով, նրանց իրեն մոտեցրեց[3], և Տերն այդ քողն է ձեր սրտերից վերցնում: Նա հենց սկզբից ձեր ազգի հանդեպ մարդասեր էր, որ Իր ծառային «աստվածանուն» կոչելով՝ մեծա-րեց և Իր փառքով զարդարեց նրան[4]: Ժողո-վուրդն ատելությունից [քշված] փախչում էր Նրանից, իսկ Նա նշաններով ու հնարքներով նրանց ետ էր բերում, որպեսզի Իր մարդասի-րությունից ելնելով՝ կարողանան բաց դեմքով Աստվածությունը տեսնել: Սա հենց Նա է, Ով ձեզ շատ բաներով կրթեց, որպեսզի այսօր ար-ժանի լինեք Աստվածության լույսի ճաճանչը տեսնելու: Սակայն դու քեզ այսօր նրանցից ավելի լավ դրսևորեցիր. թեև զարհուրեցիր, բայց փախուստի չդիմեցիր: [Ահա] այդպես երևաց, որ Աստծու սերը քո մեջ ավելի մեծ չափով է բնակվել, քան նախնի ժողովրդի մեջ:

Իսկ հիմա շուրջդ լա՛վ նայիր. ո՞ւմ հետ ես շրջում, ո՞ւմ հետ նստում, ո՞ւմ ուղեկիցն ես և կամ ո՞ւմ համախոհը: Դու չէի՞ր, որ գեղեցիկ վկայությունը տվեցիր ու Քրիստոսին Աստծու Որդի դավանեցիր, ո՛վ քաջ: Աստված ես դա-վանում, բայց տաղավարներո՞ւմ ես բնակեց-նում: Դա ոչ միայն Քրիստոս հանձն չի առնի, այլև ոչ իսկ քո ընկերակից Եղիան, ում բարձրանալը դու տեսել ես, և ում մեծության պատիվը քեզ երևացել է: Եթե դա ճշմարտա-պես հասկանայիր, ապա այսպես անարժանա-պես չէիր խոսի:

Ինձ ասա՛, հյուղակներդ ի՞նչ նյութերից ես սարքելու: Մի՞թե փայտից ու խոտից, տասներկու [աշակերտներից] ո՛վ մեծդ: Լա՛վ ուշք դիր, հրեղեն կառք ունի, բոցեղեն երի-վարներ: Հուրն ու խոտը միասին չեն բնակ-վում: Բայց եթե անգամ դա էլ մի կողմ թող-նենք, ապա ինքն արդեն իսկ նույն պատվով զարդարված է: Եթե այդպես չլիներ, բոցի առաջ ինչպե՞ս հանգիստ կկանգներ:

Այսօր քեզ մի փոքր սպիտակություն է երևացել, արդեն չգիտես՝ ինչ ես խոսում: Ուր Եղիան է բնակվում, է՛լ ավելի պայծառ է, քան որ քեզ երևաց: Եվ դու այդպիսի մարդուն տա-ղավա՞ր ես հրավիրում ու նրա շքեղ պատվից չե՞ս պատկառում:

Եվ դարձյալ՝ աշխարհների Տիրոջն էլ կա-րոտյալ ես դարձնում և տեղաբնակ ես կար-ծում: Ինքը գիտի բոլորի տեղը և կարող է բո-լորի կարիքները հոգալ: Տեղի շնորհիվ չէ, որ Նա պատվական է երևացել, այլ Նրանով է տե-ղը շքեղացել: Մի փոքր սպիտակ զգեստից զարհուրել ես, ապա եթե տեսնես Նրան ամ-բողջական Իր Հոր փառքի մեջ, այնժամ երկ-րային պատվական տեղերից և ոչ մեկը Նրան արժանի չես համարի: Այն խոսքը, որ վերևից եկավ, ա՛յն համարիր Նրա տեղը, փառքն ու անպատում վայելչությունը: Նրա՛ն նայիր, Նրա ձայնի հետ կաթոգին եղիր: Այժմ քո մարմնի աչքերը լույսով լցվեցին. իսկ հետո դո՛ւ ամբողջությամբ լույսով կլցվես, այնպես որ, ինքդ քեզ հազիվ կկարողանաս հասու լինել:

---

[3] Ակնարկում է Աստվածությունը տեսնելուց հետո Մովսեսի դեմքի ճառա□ումը:

[4] Ակնարկում է փարավոնի կողմից Մովսեսին «աստված» որակելը:

Սակայն արքայության Տերը տաղավարի կարոտ չէ: Արժեր, որ դա իմանայիր ամպի օրինակով, որ անապատում ժողովրդի անբավ բազմության համար կապեց իբրև ծածկ: [Ցե-ղեկը] ամպը բավարար հովանի էր, իսկ ամ-բողջ գիշեր կրակի լույսն էր առաջնորդում: Ու եթե չարերին էր այդպես գթում, որքա՜ն առավել ձեզ՝ տառապածներիդ, որ ամեն ինչ թողել ու Նրա հետ եք շրջում, ինչ որ ձեզ ասում է՝ լսում եք, և ձեր բոլոր բարի ցան-կությունները Նա կատարում է:

Հենց այդ տեղում Նրա փառքի տապից մի փոքր աղեխարշվեցիք, և ամպը ձեզ վրա արագ-արագ թանձրացրեց: Եթե փոքր-ինչ ուշանար, դուք էլ, այդ տեղն էլ բոցակեզ կլի-նեիք: Ի բնե տաք են այս տեղերը, ուր ամառա-յին հրդեհներ են բորբոքվում: Եվ եթե չափա-վոր լույսն է այդպիսի տապով հարվածում, ապա ի՞նչ ես կարծում, եթե ինքնածագ Լույսը թույլ տար ցամաք ու ծով բռնե, առհասարակ չէ՞ր այրի: Այդ լույսից մի փոքր ճաճանչ եր-նաց Պողոսին ու թեև նրա մարմինը չայրեց, բայց նրա աչքի լույսը կիզեց. թեև նրան էլի շնորհվեց, բայց նախկինը կորցրեց (տե՛ս Գործք Թ):

Ինքն Իրեն ծածկել է Իր ողորմածու-թյամբ: Գրված է, որ [ոչ ոք] ի վիճակի չէ Նրա Աստվածությունը տեսնելու (տե՛ս Ա Հովհ. Դ 12): Տեսա՞ր. Աստված ուր որ արարածների հետ խոնարհությամբ է խոսում՝ Իր մարդասի-րությունն է ի հայտ բերում: Իսկ եթե Ինքն Իրեն այնպես հայտներ ինչպես որ կա, ապա արարածներս Նրա առջև կապականվեինք:

Արդ, տե՛ր Պետրոս, թող քեզ բարի գործ չթվա Նրա համար տաղավարներ սարքելը, որովհետև այդպիսի գործի ժամանակը չէ, ոչ էլ դու շինարար ես. հյուսնությունից տեղյակ չես, ոչ էլ քարերից պատ շարել գիտես: [Նա] Վարդապետ կոչվեց, և Իր արվեստը քեզանից չթաքցրեց: Եթե իհարկե չես մոռացել: Միշտ էլ քո աչքի առջև գործեց ու գործում է և շատ է ցանկանում, որ սովորեք թե՛ խոսքով, թե՛ գործով: Ինչպես որ ինքն է առանց հոգնելու, անդադար Իր արվեստն առաջ տանում, նույն նահատակությանն էլ ձեզ է վարժեցնում:

Քնատ մի՛ խոսիր և երազակոծ եղած ճշմարտությունը վայրիվերո մի՛ պատմիր: Երկնային մանրագորի հոտն ես առել, դրա բուրմունքի հետ վերաբերվել սովորիր: Շտա-պիր ստվերաշուք տարրերից վեր բարձրանալ, քան թե դրանց տակ նստել: Մի՛ աղաչիր, որ այդպիսի չքնաղ, անապական Լույսն այս ծմակ տեղերում բնակվի: Եթե [Նրան] ջրային [կեն-դանիները] տեսնեին՝ դեպի ցամաք կդիմեին: Եթե սանդարամետականների վրա ծագեր, բո-լորին էլ վեր կքաշեր, կտաներ: Եթե հրեշտակ-ները իշխանություն ունենային, երկնքի լույ-սը թողած՝ դեպի այդ լույսը կիջնեին: [Երբ] այդ լույսը երկնքից երկիր է երևում, երկրա-վորներին երկինք է տանում: Իսկ երբ երկրից վեր է ծագում, վերիններին է ցած իջեցնում:

Այդ լույսով էր, որ Հակոբը Տիրոջը լու-սեղեն սանդուղքի վրա տեսավ: Լուսեղեն տե-ղերում էր Եղիան բնակվում. այն լույսը թո-ղած՝ դեպի այս լույսն իջավ: Այդ լույսին էր Մովսեսը հանձնվել, Նաբավ լեռան վրա ազ-դըվելով դրանից, շտապեց եկավ դեպի այդ անձկալին:

Տեսնո՞ւմ ես, թե ինչպե՛ս են երկուսն էլ լույսին փարվում: Այն բազում խոսքերից, որ Նրա հետ խոսում են, չէին հագենում: Այդ լույսը ծագելով՝ արեգակը խավարեց, ինչպես աստղերը՝ արևից. դրա պատճառով արփին չերևաց: Ու քեզ երանի եմ տալիս, որ դա տե-սար, դեպի այն կանչվեցիր: Ամեն աշակերտ շտապում է ուսանել իր ուսուցչի արվեստը: Քո այն տաղավարներից չհանե՞ց Նա քեզ: Ինչ-որ հյուղակներ էիք ծովեզերքին սարքել. հանուն այդ Լույսի ձեզ դրանք թողնել տվեց, որպես-զի այստեղ թևակոխեք, Նրան հետ ելնեք, այս-տեղ գաք, Նրա մասին խոկաք, և Նրանով զգեստավորվելու արժանի լինեք:

Թռչունների ցեղը չե՞ք տեսել, երբ ծագե-րի թևերը թավանում-աճում են, բներում չեն մնում, այլ հայրենի արվեստով են շարժվում. ինչ որ տեսնում են՝ այն էլ սովորում են: Քանի դեռ թևերը մատղաշ են, տեղում են թափահա-րում, իսկ երբ բոլորովին խոշորանում են, աճում ու մեծանում, արդեն վեր են վազում՝ ոստերի վրա խաղալով, ընկնելուց չերկյուղե-լով, ապա օդ բարձրանալով՝ օդից վեր՝ լեռնե-րի շուրջն են ճախրում, թռչելով ամպերն են քերում, առանց վարանելու երկրի վրա սողա-ցող վնասատուների վրա են գնում:

Նման օրինակներով էլ Տերն է ձեզ ուսու-ցանում, հրաշագործություններով ու մեծա-մեծ հրաշքներով կրթում, որպեսզի ամեն ին-չի համար հոգ տանելով՝ ձեզ իրեն միացնի, և որպեսզի դուք էլ ուրիշներին մահից դեպի կյանք որսաք: Ձեզ կիրթ, հմուտ ու ավելի իրազեկ դարձրեց, որպեսզի ամբողջ աշխարհի համար կյանքի պատճառ լինեք:

Բայց դու, որ այդ լեռան վրա չէիր, թող քո միտքը «լույս» բառը լսելիս այս լույսը չի-մանա: Այս լույսը մենք միշտ ենք տեսնում, ո՛չ հիմարանում ենք, ո՛չ թմրում, ոչ էլ ամե-նևին մեր սիրտն է ինչ-որ երկյուղ ընկնում: Այլ ինչ որ գիշերն ենք, նույնն էլ՝ ցերեկը: Որովհետև նյութեղեն արարած է ու մեզ սպա-սավորելու կոչված: Պղտոր, մթին, փոշեխառն և խտացած ես այն տեսել, որը վերին երկինքը չի կարող տեսանելի դարձնել: Այնքա՜ն տար-բեր է այն Լույսից, ինչպես նկարվածը՝ իրա-կանից:

Ինչպես և Ինքը՝ Աստվածությունը, մար-գարեներին բազում մասերով երևաց, սակայն նրանցից ոչ մե՛կն էլ Աստծուն չկարողացավ տեսնել, այլ ինչ նմանողությամբ տեսան, բա-վարար համարեցին: Իրենց կամքի համաձայն հանգչեցին, և նրանց [մարգարեների] խոսքե-րը կատարվեցին գործերով:

Ինչպես որ այսօր լեռան վրա երևաց Նա, Ում ամեն օր տեսնում էին, սակայն այսօր սո-վորականի նման չտեսան և ո՛չ էլ ուրիշ մեկին շփոթելով՝ իբրև Քրիստոս տեսան: Ինչպես էր, այնպես տեսան, ոչ առաջվա պես հասարակ: Նախկինից մի փոքր ավելի վեր տեսան ու թմրեցին այն սքանչելիքներից: Եվ եթե ձեր կարծածներից ավելին էլ կարծեիք, [միևնույն է], ձեր միտքը դրանից ավելին չէր տեսնի:

Բոլոր արարածներն էլ Աստծու հրաշա-գործության [արդյունքն] են: Աշխարհը ուրիշ որևէ մեկի հրաշագործությամբ չի արարվել, որովհետև աշխարհից առաջ չի էլ եղել ուրիշ մեկը: Եվ Աստված է միայն բնությամբ բարի և ինչ որ կամենում է, կարող է անել, ոչ թե Իր անկարոտ բնության կարիքների համար, այլ որպեսզի արարածներիս լիացնի առանց պակա-սության: Աստված մարդուն բոլոր արարած-ներից ավելի շատ է սիրում և ուզում է, որ նշանների միջոցով Իր անեղ բնությունը ճա-նաչեն, ու այդ ճանաչողությամբ սիրո բարե-կամություն լինի, և [մարդուն] է՛լ ավելի վեր հանելով՝ Իրեն գահակից անի:

Այսօր էլ ձեզ նույն սիրո զորությունը ցույց տվեց: Ոչ թե երկրային նշաններով, այլ հատկապես երկնային: Մինչև այսօր մարմնա-վոր էիք, և Նրան որպես մարդ էիք տեսնում, «վարդապետ» կանչում և մարդ կարծելն էր ձեր զարմանքների պատճառը: Դրա համար նրանց միջից մարմնավոր տգիտությունը փարատեց, որպեսզի երկնավոր հայտնու-թյամբ կրթի, որ ամբողջովին մարմնավորա-պես չընթանան:

Այդպես էլ Գիրքն է ասում. «Նրանց առաջ այլակերպվեց»: «Այլակերպվելն» այլ բան չպետք է հասկանալ, քան նրանց առաջ աստ-վածակերպ երևալը: Որովհետև իր ժամանա-կին նրանց ևս նույն կերպարանքին փոխեց:

Նրանց աչքերը վարժվեցին Տիրոջ մարմ-նավորությանը նայել, բայց նրանց մտքերը չկարողացան երկինք բարձրանալ: Նրանց աչ-քերը Նրա փառքի լույսին դիպան, [սակայն] չկարողացան Նրա արժանի էությունը ճանա-չել:

Նրանք Տիրոջ հետ բազում բարձր տեղեր էին ելել, բայց ոչ մտքով: Այն օրն իմանալի Լույսը այդպիսի տեսիլ ցույց տվեց նրանց, որպեսզի նրանց առավել ևս կրթի: Մարմնա-պես լեռը բարձրացան, իսկ մտքով՝ նրանց բո-լոր աշխարհիկ ցանկություններից վեր հանեց: Լեռը քաղաքներից ավելի բարձր է, սակայն նրանց բոլոր աշխարհներից էլ վեր բարձ-րացրեց:

Մի ժամանակ Տիրոջ հետ Գալիլեայում լեռը բարձրացան, ուր նրանց երանություն-ները ավետարանեց: Երկնային խոսքեր լսե-ցին, բայց նրանց միտքը երկրայինից վեր չբարձրացավ: Իսկ այստեղ խոսքերով ոչինչ չխոսեց նրանց հետ, այլ լեռը լույսով երկնքի վերածեց և լռությամբ նրանց երկնավորներ դարձրեց:

Մեր բնությանը հատուկ է, երբ բազմամ-բոխ քաղաքում ենք շրջում, քաղաքային կար-գերն ենք սիրում ճանաչել: Ավելի հաճախ ենք աչքերս հառում երկրային փառքին, որից մեր մտքերը

խոնարհվում են դեպի երկրային ապականացու բաները: Եվ եթե մեծ պատրաս-տությամբ ինքդ քո հանդեպ զգուշություն հանդես չբերես, հազիվ թե կարողանաս այս աշխարհի սին զվարճություններից ազատվել: Դրա համար Մովսեսն էլ, ժողովրդին Եգիպտո-սից հանելով՝ քառասուն տարիներ անապա-տում շրջեց և ապա միայն կարողացավ օրենսդիր լինել նրանց համար: Իսկ երբ բազ-մամարդ քաղաքներում բնակություն հաստա-տեցին, դրված օրենքներն այլևս չկարողացան պահել: Եվ ճշմարիտ է, որ՝ ով երկրին է աչ-քերը հառում, նա երկինքը չի կարող տեսնել:

Արդ, մեր Տերն էլ, որպես թե Եգիպտո-սից[5] աշակերտներին դուրս բերելով, նրանց այն լեռը հանեց, և երկնքի չգրված օրենքները սովորեցրեց, որովհետև մեր առաջվա տեղը նույնպես գրված չէր[6]:

Գիրը մարմնականներ մասին է խոսում, իսկ չգրվածը անմարմին էությունն է ցույց տալիս:

Գիրը Մովսեսի մահն է պատմում, իսկ չգրվածը՝ Տիրոջ հայտնությունը աշակերտ-ներին:

Գիրն անցողիկ է և այս անցավոր աշխար-հի մասին է պատմում: Իսկ չգրվածը խոսում է անցավորի մասին, որպեսզի անանց դարձնի:

Գիրն Եղիայի վեր ելնելը նյութական պատվով է պատմում, իսկ չգրվածը՝ Տիրոջ ու Եղիայանց երևումը ոչ թե ուրիշների պես ինչ-որ բան նստած եկավ, այլ Ինքն Իրենով երկնքից ավելի բարձր երևաց: Ոչ որպես այ-րող բնություն՝ մարմնավորներիս ահաբեկե-լով, այլ իբրև փափուկ և արարող լույս, ինչ-պես որ արքայության ժառանգորդներն են՝ անմարմինների նման [դրանով] զգեստավոր-վելու:

Տերն այդպիսին երևաց և ըստ Իր էական բնության՝ [Իր] ծառաներին նույն փառավո-րությունը շնորհեց: Որովհետև եթե այդպի-սին չլինեին, ոչ էլ կկարողանային անկեզ հրին մոտենալ: Պետրոսյանք էլ, որ Աստվածային փառքի ականատեսներն էին, այս ծանր մարմ-նականներից վեր էին կորզվել ու հասել մինչև իմանալի հրեշտակների բնակավայրերը:

Ինչպես այն երեքը, այնպես էլ այս երեքը մահվանից շատ էին վեր անցել: Եվ ոչ միայն չէին երկնչում մահվանից, այլև մահը շատ տեղերում մարդկանցից հալածական էին դար-ձընում, որովհետև նրանց աղքատությունը հույժ մեծացել էր:

[Լեռը] ելան իբրև երկչոտներ, սակայն երկյուղից ավելի վեր գտնվեցին:

Մարդու Որդու հետ ելան, սակայն Նրան այնտեղ Աստծու Որդի տեսան:

Որպես առավել քան տգետներ ելան և այնտեղ կատարյալ գիտություն սովորեցին:

Ելան Նրա հետ, Ում կույսից ծնված գի-տեին և այնտեղ իմացան, որ Նա այս աշխար-հից էլ առաջ Հորից է ծնված:

Ելան Նրա հետ, Ով Հովհաննեսի ձեռքով էր մկրտվել, և այնտեղ տեսան Նրան, Ով բնակվում է Իր փառքի անմատույց լույսի ճառագայթների մեջ:

Ելան Նրա հետ, Ով հոգնում էր հետիոտն գնալով, և այնտեղ իմացան, որ Նա քերովբեա-կան կառքն է նստում:

Ելան Նրա հետ, Ում հրեաները մահով էին սպառնում, և իմացան, որ Նա մահվան ու կյանքի Տերն է:

Ելան Նրա հետ, Ում աղաչում էին, որ Ինքն Իրեն մահվան չմատնի, և իմացան, որ եթե Նա մեռյալների մոտ չգնա, ապա Աբրա-համյանք չեն կարող Մովսեսյանց մոտ գալ: Եվ նրանք, ովքեր [Նրան] մահվանից ետ էին պա-հում, [այժմ] ժամանակից առաջ շտապում էին Նրա մահը տեսնել:

Արքայության պատճառով նրանց այն լե-ռը բարձրացեց ու հասկացրեց, որ առանց Միածնի մահվան ոչ ոք չի կարող արքայու-թյունը ժառանգել:

---

[5] Մեկնաբանական ավանդույթը «Ե□իպտոսը» նշանակն է համարում մեղքի ու խավարի (Եպիփան Կիպրացի «Մեկնություն Ավետարանի»)

[6] Ակնարկում է արքայությունը, որ անմասն էր մեղքի համար սահմանված □բավոր օրենքից:

Եվ եթե այս երկու համեմատություններ-ը՝ երկնային ու երկրային, բարի են, ապա մեր Տերն արդյոք ինչո՞ւ էր Իր աշակերտներ-ին պատվիրում ու ասում, որ ամենևին ոչ մեկին չպատմեն այն հայտնության մասին, որ իրենց երևաց (տե՛ս Մարկ. Թ 8):

Սա հատուկ է Քրիստոսի վարդապետու-թյանը: Երբ ախտացյալներին բժշկելով Իր մարդասիրությունն էր ի հայտ բերում, նրանցից շատերին նույն բանն էր պատվի-րում՝ «Ոչ ոքի, գյուղերում թե քաղաքներում, զուր տեղը չպատմեք» (հմմտ. Մարկ. Ա 44): Որպեսզի դու էլ նույնը սովորես, քո ողորմու-թյուններն աշխարհով մեկ չհայտարարել: Իսկ եթե պետք էլ լինի ցույց տալ, թող խոսքերի փոխարեն գործերը վկայեն:

Աստված այս ամբողջ աշխարհը ստեղծեց ու մեզ տվեց և դա մեզ համար երախտիք չհա-մարեց, այլ միայն [պատվիրեց], որ Նրան ճա-նաչենք ու Իր կամքով ընթանանք: Աշակերտ-ներին պատվիրեց աստվածանման լինել, որովհետև նրանց Իրեն ժառանգներ հաստա-տեց և նրանցով էլ՝ ամբողջ աշխարհը: Եվ երբ Աստծով կատարեն իրենց վարդապետի բոլոր մեծամեծ գործերը, ապա դրանց [գաղտնի] խորհուրդները թողնեն միայն Ծածկագետին:

Դարձյալ՝ նրանց սաստիկ խնայեց, միգու-ցե մարմնականից [մղված] պարծենան այն սքանչելիքների համար, որ այնտեղ կատար-վեցին ու տեսան: Որովհետև թշնամիների մեջ էին շրջում, ոչ թե՝ բարեկամների, և ավելի շատ կեղծավորների առջև էին լինում, ովքեր ճանճերի պես վերքասերներ էին և ուր թա-ռախ էին տեսնում, վերքն է՛լ ավելի էին բոր-բոքում: Իսկ նենգավոր մարդկանց խոսքերը սրանից էլ ավելի չար են լինում, ինչպես որ հենց նրանք էլ շատերի մահվան պատճառը եղան և ոչ միայն հողածին մարմնի, այլև անմահ հոգիների սպանողներ:

Նոր նորոգվածներին, ովքեր ճաշակել էին նոր գինուց, պատվիրեց որպեսզի գինու զո-րությունը հին տիկերի մեջ չլցնեն, որովհետև [դրանք] չեն կարող դիմանալ նրա ուժին: Դրանով նրանց մեծ կորուստից ետ պահեց, որովհետև գիտեր, որ տիկերը կպատռվեն ու գինին կթափվի, ու նրանց վնաս կպատճառի, ինչպես որ Կայիափայի հետ եղավ: [Որովհետև երբ լսեց՝] «Այսուհետև Մարդու Որդուն կտես-նեք նստած ամենազոր Աստծու աջ կողմում» (Մատթ. ԻԶ 64), հին տիկի պես պատռեց իր պատմուճանը և ինքն ամբողջովին դուրս թափվեց և ընկավ Աստվածային աստիճանից: Եվ եթե Տիրոջ այս խոսքերից այնպես խփվե-ցին և ծեծված ընկան, ապա ի՞նչ ես կարծում, եթե աշակերտներից լսեին երկնային սքանչե-լիքների մասին, արդյոք կրակի պես նրաց դեմ չէի՞ն բորբոքվի ու այրի իրենց և նրանց առհասարակ:

Որովհետև երբ նրանցից լսեին, իսկույն կհարցնեին, թե վերին տեսիլքի գերազանցու-թյունը ո՞րն էր: Ու եթե նրանց Մովսեսի ու Եղիայի մասին պատմեին, ապա սուտ կհամա-րեին, որովհետև չէին կարողանա հայտնապես ցույց տալ: Եթե ասեին՝ եկան երևացին ու գնացին, դա ճշմարիտ չէին համարի. որով-հետև հավատքի գիտությունը չունեին այն ժամանակ և ինչ որ իրենց աչքերով տեսնում էին Տիրոջից, չէին հավատում:

Դարձյալ՝ եթե սպիտակ զգեստների մա-սին ասեին, ապա կորստյան արժանիներին կրկնակի կորուստ կպատճառեին կա՛մ էլ նրանց խոսքերը չէին լսի ու միայն սպիտակ զգեստների [պատմությունը] կհիշեին, որով-հետև սոսկ երկրային բաների մասին էին մտածում ու անհավատ էին լսելիքով և իմա-նալի հայտնությունը չէին կարող տեսնել:

Նրանք այնտեղ՝ լեռան վրա, մարմնավոր հայտնություն չտեսան, այլ երկնային իմանա-լի զորությունը ճանաչեցին, այն, ինչի հայտ-նությունը միայն Նա՛ գիտե և ում որ կա-մենում է, Ինքն է մաս առ մաս հայտնում: Իսկ այն միայն մտքում կարելի է ժողովել, ոչ թե խոսքերով պատմել ու մեկի լսելիքներին հայտնել: Որովհետև այն, որ խոսքով է նկարա-գրվում, կորցնում է իր իրական պատկերը մարմնավոր ձև ստանալու պատճառով:

Իսկ երկնային փառքը սրանից՝ թե՛ մարդ-կանցից, թե՛ հրեշտակներից ավելի վեր է կանգնած: Պողոս առաքյալի՛ն լսիր, որ ոչ միայն լեռը բարձրացավ, այլև Երրորդ Եր-կինքն ու դրախտը և սրբերի պատրաստու-թյունը տեսավ (Բ Կոր. ԺԲ 12): Պարգևատուի խոսքը լսեց, բայց դեմ հանդիման չկարողա-ցավ [Նրան] հանդիպել և այն խոսքերի զորու-թյունը, որը վերևից իրեն մաս

առ մաս հա-սավ, ոչ մեկը չկարողացավ կրկնել: Նույնն է նաև երկնային պարգևների [պարագան], որոնք պատրաստ պահվում են, և որոնց հա-մար ասաց, որ այս երկրավոր պատվական պարգևներից որևէ մեկի հետ համեմատել հնարավոր չէ: Եվ մենք սրանց վրա ենք մեր հույսը դնում, որպես ճշմարիտ ապագայի, որ Պողոսը տեսել է ու պատմել չի կարողացել: Քրիստոսին հավատացողներս լիովին իմա-նում ենք, և իմացածն էլ տեսնում, և հույսով այնպես ենք սպասում, ինչպես երանելի Պողոսը:

Արդ, այս ամենի մասին, ինչն առաքյալ-ները լեռան վրա Սուրբ Հոգով տեսան, թերա-հավատ ժողովրդի լսելիքներին թույլ չտրվեց պատմել: Նախ՝ որովհետև նրանք չէին կարող պատմողներ լինել, և մյուսը, որ նրանց, ում պատմելու էին, լսելու արժանի չէին: Ինչպես և Ինքը Տերը նախապես սովորեցրեց առա-քյալներին. «Մ՛ի տվեք սրբությունը շներին և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք» (Մատթ. է 6):

Շան համար մաքուր կամ պիղծ կերակու-րը մեկ է, իսկ խոզին պատվական մարգարի-տից ավելի լավ է թվում գարշելի տիղմը, որի մեջ թավալվում է: Այս տեսնելը, պարգևներ Տվողին չար է երևում, իսկ դրսի տեսնողնե-րին՝ առավել ևս չար: Դրա համար էլ մեր Տերը լուսավոր խորհուրդը լույսի մանուկներին հայտնեց, որպեսզի վկաները լինեն ճշմարիտ լույսի, որ նրանց այնտեղ՝ լեռան վրա երևաց: Նույն լույսով էլ լվացված պետք է մնան, որ-պես անստվեր ճառագայթներ: Եվ նրանք են լինելու Նրա լուսավորության քարոզիչները, որպիսիք եղան ու կատարեցին:

Բոլոր արարածները, որոնք խավարի մեջ ու մահվան ստվերներում էին նստում, այն անանց լույսին դիմեցին, և նույն լույսով լու-սավորվեցին և [շարունակաբար] լուսավորում են՝ մինչև նույն Լույսի երկրորդ հայտնու-թյունը: Եվ նույն Տերը գալու է լուսավոր ամ-պով ու բոլոր երկնային լուսավոր զորքով: Եվ այս լույսով մեռյալներն ու կենդանի եղողնե-րից արժանավորը՝ անփոփոխ, անվախճան ու հավիտյան պիտի լուսավորվեն:

Իմ մտքում սաստիկ կասկած առաջացավ, երբ ճառիս ավարտին մոտեցա: Անդրադարձա, որ սրա մեջ չքննված բաներ մնացին, որով-հետև փոքրիշատե ավելի լավ տեղյակ ենք մտախույզներին, որ ի շահ իրենց և ի փառս սուրբ Եկեղեցու՝ անմեղորեն քննում են խոս-քի զորությունը: Այստեղ էլ հենց՝ մեր աշխար-հում տեսնում ենք, որ շատերն են ընթանում առաքինությամբ ու հաստատուն հավատով, ըստ առաքելական կանոնի, և դրանց համար հրճվում ու ցնծում է հեթանոսների սուրբ Եկեղեցին: Մեծ Հայքի ուխտավոր զավակնե-րը, այս հավատով տոգորված, ուսումնա-սիրությունների մեջ էին խորամուխ լինում, իրենց անձերը հեռու պահելով վաճառաշահ օգուտներից՝ մեծ հարստության հետամուտ չեն լինում, այլ այդպիսիների մշտական գործն է պահքն ու աղոթքները, և իրենց ան-ձերը [հեռու] պահելը հոգեսպան բոլոր չա-րիքներից:

Գիտեմ որ նրանք, ովքեր կարդում են Սուրբ Կտակարանների ծածկված խոսքերը, հարցեր ու խնդիրներ ունեն այս ճառի վերա-բերյալ, իրար ու ինձ հարցնելու: Ասում են՝ «Մովսեսը, մեռելներից մարմնով հարություն առավ ու Նաբավ լեռից մեր Տիրոջ մոտ եկավ: Ահա Եղիային էլ ոչինչ չէր խանգարում, որ ինչպես արագ բարձրացել էր, ավելի արագ էլ գար [Տիրոջ մոտ]: Մովսեսի համար չենք զար-մանում, որ Եղիայի արագությամբ եկավ, այլ՝ որ մարմնո՞վ հարություն առավ, թե՞ հոգով նրանց առաջ կերպարանավորվեց: Եթե մար-մընով հարություն առավ, ապա դա իր համար ճշմարիտ վիշտ պիտի լիներ: Նա, ով Աստծուն աղաչում էր [նույնիսկ] մի անգամ չմեռնել, արդյո՞ք կրկնակի մահը ճաշակեց: Մանա-վանդ, որ Եղիային անմահության մեջ էր տե-սել, իսկ Տիրոջը՝ Իր Հոր փառքով արքայու-թյան մեջ: Ինքն այստեղ հողից էր եկել և կրկին արագ-արագ դեպի [հող] պիտի դառ-նար:

Ճառի այդ տեղը, ասում են, չափազանց դժվարին է»: Այդ հարցումն ինձ ծանր չի թվում: Բան կա, որ դարձյալ Գրքից վերցնե-լով եմ պատասխանելու, և բան կա, որ չգրված էությունից՝ Աստվածային զորությանը նայե-լով: Եվ դրանք հակասական չեն. գիրը լսե-լիքներին է հայտնում Աստվածային պատվի-րանները, իսկ չգրվածը՝ մտքի աներևույթ տախտակին: Երկուսն էլ

աստվածատուր շնորհ-ներ են: [Գրվածքը] աչքերը տեսնում են, շրթունքները՝ կարդում և ականջները՝ լսում: Իսկ չգրվածը՝ մեկնությունն է հայտնում:

Արդ, մեծ է քաջաբար սերտողների [մտքի] որովայնը և անձանձրույթ, ինչպես ծովը, ու բեռների բազմության տակ չի ծան-րանում: Որքան էլ որ ընկղմվում է բեռի ծան-րության տակ, շատությունից չի հագենում: Աստծուն աղաչելով ու երկուսն ստանալով՝ եր-որդին էլ է հասու լինում: Դա կարելի է տես-նել նրանց մեջ, ովքեր առանց գրի խորամուխ են եղել Աստծու Որդու սիրո մեջ՝ գրվածներն էլ են ճշմարտությամբ ըմբռնել: Աստծու չգրված օրենքներից ոչ մեկը նրանցից ծածուկ չի մնացել, ինչպես որ առաքյալն է ասում՝ «Նույնպես և Հոգին օգնության է հասնում մեր տկարություններին. որովհետև մենք աղոթում ենք և չգիտենք, թե ինչպես արժան է աղոթել. բայց Հոգին Ինքը բարեխոս է լի-նում մեզ անմռունչ հառաչանքներով» (Հռոմ. Ը 26):

Սրբերն առանց խոսքերի խոսում են Աստծու հետ, և առանց ձայն արձակելու վերև-ից լսում են Նրա կամքը: Եվ ինչ որ ասում կամ լսում են, գրի առնել չեն կարողանում, այլ Աստծու չգրված օրենքներն իրենց առա-քինի գործերով են հայտնում: Ու երբ նման զորությամբ մեր հոգիներն ենք պրպտում, կարողանում ենք Աստծու Խոսքի գաղտնիք-ները ծածկապես էլ իմանալ: Իսկ եթե տվչու-թյամբ [խոսքի] պարգև է շնորհվում, հայտ-նում ենք և այլոց, որպեսզի նրանց լսելիքի վրա նույնպես ազդեն երկնային հնչյունները:

Եղիան՝ մի, իսկ Եղիսեն՝ երկու մեռելների հարություն տվեց: Սակայն սրանց ոչ ոք կրկնամահ չի ասում, այլ՝ մի կյանք ու մի մահ [ունեցող]: Մեր Տերն էլ մեռելներին հարու-թյուն տվեց. նույն էլ սրանց համար է ասվում: Մովսեսի համար էլ նույնքան է ասվում, որով-հետև իր առաջին մահվան ժամանակ չհիվան-դացավ: Տերն Ինքը նրան դեպի լեռը կանչեց ու Ինքը, որպես Տեր, նրան առանց չարչա-րանքների գերեզմանին հանձնեց: Սրան չար-ժե անգամ մահ ասել, այլ փոփոխություն: Դա-վիթը սա նույնիսկ քուն է անվանել. «Ես ննջե-ցի, ու քուն մտա. զարթնեցի, և Տերն իմ ապա-վենն է» (Սաղմ. Գ 6):

Հենց դու, որ հարց ես տալիս, ամեն օր քուն չե՞ս մտնում, առավոտյան վեր կենում կանգնում. արթնանալուդ համար չես տըրտ-մում, որովհետև գիտես, որ նորից ընկողմա-նելու ես: Իսկ եթե փորձես ասել, որ սա ավելի հեշտ է, իսկ դա՝ ավելի դժվար, -մի՛ ասա, սխալ ես կարծում: Մովսեսի համար մահը հա-զար անգամ ավելի հեշտ էր, քան քո քնելը: Եթե քաղցած կամ ծարավ քուն մտնես՝ ան-ընդհատ կուտես ու չես կշտանա, աղբյուրից աղբյուր կշրջես ու չես հագենա: Եթե չափից ավելի անքուն [մնալու] բռնադատվես, առա-վո՛տը տեսնել կուզես: Եթե պատահի, որ ուտե-լիքների կամ մարմնիդ առողջության բերու-մով աղտեղություն գործես կամ մղձավանջ-ների մեջ ընկնես, որից միտքդ այս ու այն կողմ կմղվի, և ցերեկը քեզ չար կթվա:

Մեր շարժումներում ամենևին խաղաղու-թյուն չկա: Իսկ մեր Տերը Մովսեսին դրանից պարկեշտագույնս զերծ պահեց: Ծերությունը նրա գեղեցկությունը չթոռոմեցրեց, և հիվան-դությունը նրա մարմինը չապականեց. ո՛չ առաջին անգամ հեծությամբ դժոխք իջավ, ոչ էլ Տիրոջից վերջին հրաժեշտի ժամանակ դան-դաղեց թերևս: Դրա համար Աստված Ինքը ամ-փոփեց այնտեղ նրան մահով, և Իր ձեռքով փո-խադրեց նրան ու ծածկեց: Աստծու ձայնը նրան կանչեց և ամպը նրանց վրա հովանի արեց: Հենց ինքն էլ Իր սիրելի Մովսեսին շտապ մոտ բերեց: Ինչպես որ մեր Տերն Ինքն էլ ասում է՝ «Որովհետև, ինչպես որ Հայրը հա-րություն է տալիս մեռելներին և կենդանաց-նում է, նույնպես և Որդին կենդանացնում է՝ ում կամենա» (Հովհ. Ե 21): Որդին, Հորը դի-մելով, Ղազարոսին հարություն տվեց: Հայրը, Որդու հետ մեկտեղ Մովսեսին հարություն տվեց, որովհետև հենց Նրա կողքին երևացին:

Ըստ այսմ իմացիր Սուրբ Երրորդության անքակտելի միությունը՝ ինչպես արարչա-գործության ու փրկության, այնպես էլ հրա-շագործության ու հարությամբ նորոգման ժամանակ: Մովսեսի՝ մարմնով հարության հարցում թող ոչ ոք չերկմտի: Իմ այս ճառա-խօսությունը մեծահարուստի դժոխքում լի-նելու օրինակ-առակը չէ, կամ էլ՝ Աբրահամի և Ղազարոսի արքայության մեջ լինելու: Այն ապագայի մասին է հայտնում: Տեսնում ես, որ [այս ամենին] աշակերտներից ոչ մեկը վկա չէ,

որովհետև գաղտնիքները միայն Աստծուն են հայտնի: Իսկ որ ճշմարտապես երևացին՝ դա մարդիկ էլ Աստծու հետ կարողացան տեսնել:

Բայց ես ամենքին էլ խիստ աղաչում եմ, [որ իմանան]. ինչ որ երկրից է ու այստեղ, ապա դրանց մեծամասնությունը քննվում է իմաստունների կողմից, իսկ փոքրամասնու-թյունը՝ մեզնից ծածուկ է մնում: Իսկ ինչ վե-րաբերում է Աստվածությանը, ապա ակնթար-թի չափ քիչ է մեր իմացածը:

Որ վեմը ջուր է տվել՝ բոլորս էլ գիտենք, բայց թե ինչպե՛ս է տվել՝ դա մեզնից ծածկված է: Ինչպե՛ս էր [վեմը] նրանց հետ գնում՝ դա մեզ Պողոսն է մեկնում, բայց թե ինչպե՛ս էր առանց ոտքերի գնում՝ դա Պողոսն էլ չգիտեր (տե՛ս Ա Կոր. Ժ 1-4): Հենց Պողոսին, եթե հարցնես իր երկինք բարձրանալիս ճանապար-հին պատահածի մասին՝ չի կարողանա պատմել (Բ Կոր. ԺԲ 2): Որ Մովսեսը մարմնով եկել է մեռելների միջից, իսկապես հավատում ենք, սակայն ինչպե՛ս է եկել, ինքն էլ չգիտի:

Հավատում ենք, որ անմարմիններն Աբ-րահամի ճաշը կերան (տե՛ս Ծննդ. ԺԸ 8): Հա-վատում ենք նույնպես, որ Մովսեսն ու Եղիան մեր Տիրոջ մոտ՝ Թաբոր եկան: Եվ եթե մեկն այս պատճառով երկմտանքի մեջ ընկնի, ապա երեք սյուները մեզ համար որպես վկա ունենք: Իսկ եթե մեկ ուրիշն անհանճար մըտ-քով ասի, թե՝ սոսկ կերպարանքով են երևա-ցել, դա հնարավոր չէ, մի՛ հավատա: Հայելու մեջ է, որ իրերն ստվերներ են երևում, Աստ-վածաշունչ Մատյանը չի ստում: Այնտեղ առա-կով է ասվում. և մադկանցից վկաներ չեն փնտրում, այլ խոսքի մեկնությունները մըտ-քին են հասկացնում: Իսկ ուր որ ճշմարտու-թյունն է, այնտեղ էլ պարզաբանությունն է հստակ երևում:

Եսային ասել է. «Տեսա Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին» (Եսայի Զ 1): Տեսիլքը ճշմարիտ էր, բայց նա չէր կարող մեզ տեսիլքի ինչպիսին լինելը ցույց տալ: Աստ-ված երբ կամենում է, Իր ծառաների՝ մարգա-րեների հետ առակներով է խոսում, իսկ ուր խոսում է խոնարհությամբ՝ Ինքն Իրեն զգալի է դարձնում, այնքանով որքանով որ մեր բնությունն ի վիճակի է տեսնելու: Եվ հրաշա-կերտ վկաներ է բերում թե՛ հրեշտակների, թե՛ արդար մարդկանց միջից, երբեմն կենդանի եղողներից, երբեմն մեռածներից:

Նույնպես և այստեղ՝ Աստված Մովսեսի ձեռքով բազում հաշքներ գործեց, նրան բոլոր մարգարեներից առավել մեծարեց, մեռելնե-րից հարություն տվեց, նրա՛ն տեսանք Քրիս-տոսի հետ կանգնած խոսելիս: Ինչպես որ տե-սանք այնպես էլ վկայում ենք: Սակայն նրա հարության ինչպիսին լինելը Տիրոջն է միայն հայտնի: Որ Մովսեսն ու Եղիան եկան և Քրիս-տոսի հետ խոսեցին, ու երեք առաքյալները տեսան, -սրանց խոսքերի ճշմարիտ լինելը վկայում ենք: Իսկ այն, ինչ մեր աչքին ան-հնար է, Աստծու համար ամե՛ն ինչ հնարավոր է:

■

Իսկ այդ լեռան գեղեցկության ու վայ-րերի վայելչության մասին եթե կամենում եք հաճույքով ունկնդիր լինել, ապա մի փոքր կնկարագրեմ ձեզ համար այդ ցանկալի տեղի պատկերը: Ավետարանից լսած լինելով՝ բո-լորդ էլ տեղը գիտեք, բայց մենք անձամբ ենք այնտեղ եղել ու մեր աչքերով տեսել, ոչ թե միայնակ, այլ բազում ընկերակիցների հետ, որոնցից ոմանք կամեցան լեռան վրա մնալը, ոչ թե մարմնական ախորժելի բաղձանքից [մղված], այլ Քրիստոսի գթոտ սիրուց:

Որովհետև այնտեղ բազում սքանչելի եղ-բայրներ են բնակություն հաստատել, ովքեր առավելապես հոգով են ընթանում, քան թե մարմնով: Եթե մեկն այն տեղին մարմնասեր մտքից մղված նայի, բազմաթիվ լեռներից այն ավելի վայելուչ կգտնի: Նախ՝ որովհետև այն գալիլեացիների երկրում մի մեծ դաշտի մեջ է նստած, և նրան բոլորովին մոտ ուրիշ լեռ չկա, որով և ավելի հեռվից երևում է: Ինքն էլ բարձր ու բոլորանիստ է, շուրջն ինք-նաբուխ ջրհորներ, բազմաթիվ խիտ ու թավ անտառներ կան, որոնք անձրևաբուխ ամպերի շնորհիվ պտղաբերում են: Այնտեղ տեսակ-տեսակ քաղցրահամ մրգեր են լինում, և բա-զում քաղցր անուշահամ պտուղներ, ինչպես նաև թագավորների ընպելուն արժանի գինի պարգևող որթատունկեր:

Լեռան դիմաց փարթամ ձիթենիներ ու եղջերենիներ [կան], որոնց վրա չորս կողմե-րից քամիներ [են փչում], և որոնց մեջ ամե-նից շատ հյուսիսայինն է զորավոր լինում: Շավիղը, որով Տերն է բարձրացել, շիփ-շիտակ է, և այս ու այն կողմում ճանապարհ է հյուս-ված: Ով ցանկանա ելնել ու այնտեղ աղոթքի կանգնել, հեշտությամբ վեր կբարձրանա:

Երբ մեկը լեռան բուն գագաթը ելնի, առ-հասարակ ամբողջ դաշտը պարզ կտեսնի՝ արև-ելքից մինչև Հորդանան գետը, արևմուտքից մինչև Ծայդանացվոց աշխարհի մեծ ծովը, հյուսիսից մինչև Տիբերական ծովը, հարավից մինչև Նաբովթ Եզրայելացու այգին: Շուրջ-բոլորը բնակավայրեր են տարածված, գյուղ առ գյուղ, այգի առ այգի, ու դրանց մեջ՝ բազ-մաթիվ քաղաքներ: Լեռան կատարը հովտաձև գոգավորություն ունի: Նրա վրա հազվագյուտ ծառեր են աճում ու պարարտ հող ունի:

Եվ այն տեղում, հովիտների արևելյան կողմում, ուր Իր լուսավոր պայծառությամբ Տերը նրանց երևաց, ըստ Պետրոսի խոսքերի, միմյանցից հեռու երեք եկեղեցիներ են շին-ված, որոնք բազմաթիվ ծառայողներ ունեն՝ զերծ ու զատված բոլոր մարմնական ցանկու-թյուններից: Թեև մարմնով են ապրում, բայց մամնական հաճույքով չեն առաջնորդվում: Այնպես առաքինի են, որ նրանց մասին կարե-լի է կարծել, թե մարմնականի կարոտություն բոլորովին չեն քաշում:

Երբեք ոչ ոքից ոսկի, արծաթ կամ հան-դերձ չեն ընդունել, և ոչ մի իր, որ մարմնի համար անհրաժեշտ է: Այլ, ինչպես բոլոր միա-բաններին էլ հաճելի թվաց, յուրաքանչյուր մարդ երկմատանի փայտատ[7] սարքել և դրա-նով հովիտների պարարտ հողն է վարում, այն-տեղ ցորեն ու գարի սերմանում, և ուրիշ հուն-դեր էլ՝ ապրուստի համար: Եվ երբ հասկերը հասունանում են, ծայրերը խուզելով հնձում են, ապա ոտնափշուր տալով կալսում, քամուն տալիս, բերքը շեղջերի մեջ թափում, շտեմա-րանները լցնում, և այն դարձյալ իրենք եր-կանքով աղում:

[Այսպես] մեծ տանջանքով օրըստօրե ան-հրաժեշտ ուտելիքն են պատրաստում: Լոկ հա-ցով ու ջրով են կերակրվում՝ աղով համեմե-լով, որը և «խորտիկ» են անվանում: Ուրիշ անուշ կերակուրներ էլ են սարքում. ձմեռ ժա-մանակ լեռից նյու[8] են քաղում, աղաջրով ու զոպայով թթու դնում: Սա, ինչպես իրենք են ասում, տոթ օրերին խիստ օգտակար է:

Չորքոտանիները երբեք լեռն ի վեր չեն ելնում: Այնպես մաքուր են պահում վերելքի ճանապարհը, կարծես հրեշտակների և ոչ թե մարդկանց հավաքատեղի լինի: Որովհետև ար-դարև անմարմինների նման են:

[Իրենց] ամաններում կերակուրների հա-մար յուղ չունեն, այլ միայն անշեջ կանթեղ-ների համար, որ երեք եկեղեցիներում մշտա-պես վառվում են: [Իրենց] սափորներում գինի չունեն, այլ միայն՝ ի սպաս տերունական սկիհի:

---

[7] Փայտատ –փոքրիկ ուբան

[8] Նյու –լեռնային բանջար

Հիվանդների համար ավելորդ դարման չունեն, ոչ էլ օտարների համար պատրաստու-թյուններ, այլ նրանց միաբանությունում ամեն ինչ ընդհանուր է օտարների ու յուրա-յինների համար: Իրենք ոչ թե մարդատյաց-ներ են, այլ մարտի բռնված կռվում են ապստամբ մարմնի դեմ. չլինի թե ասպարեզն ուղիղ չպահելով՝ հեծյալը քարավեժ լինի: Դրա համար էլ չեն ուզում ամեն օր ուտել:

Մեկ այլ սովորություն էլ ունեն. ամռանը բնական օթևաններում են ապրում, իսկ ձմռա-նը շաբաթվա օրերին հավաքվում: Իսկ ովքեր նրանց մեջ ավելի ուժեղ են, ամբողջ շաբաթ մենակ են մնում: Ապա եթե մեկը հեռու տեղից ի սեր սուրբ ժողովի [նրանց մոտ] է գնում, կամ այնպես է լինում, որ բոլորն իրենց սո-վորական ծոմը լուծարում են, հոգևոր սննդի մասին են ավելի հոգ տանում, որպեսզի երբեք չդադարեն այն ճաշակելուց. թեև մշտապես անհագորեն [հոգևոր սնունդով] կերակրվում են, բայց ավելի ու ավելի շատ են քաղցում ու ծարավում:

Ոչ միայն հարյուր հիսուն սաղմոսներն են եղանակով ասում, այլև եկեղեցու բոլոր սուրբ Կտակարանները, որոնցով փառավորապես շքեղացնում են լեռան վրա եղող սուրբ Եկե-ղեցիները: Մերթ ուղղակի ընթերցում են, մերթ զանազան եղանակներով պաշտամունք կատարում: Երբեք հագեցած դադար չեն առ-նում: Գունդ-գունդ աբեղաներ միմյանց են փոխարինում երեք եկեղեցիներում, հավասա-րապես բաժանվելով ցերեկային ու գիշերա-յին պաշտամունքի կարգն են անվերջ կատա-րում: Իսկ երեկոյան ու առավոտյան ժամեր-գությունները ոչ թե հաջորդում են միմյանց, այլ իրար են միահյուսվում, և ավելի հաճախ վեցերորդ ժամին, քան այլ ժամերի, պա-տարագ է մատուցվում:

Երեք եկեղեցիների մեջ մեկն ավելի մեծ է, քան [մյուս] երկուսը: Այն Տերունական են անվանում: Երկուսում դրված են այն առա-քյալների սուրբ մասունքները, ովքեր և հիմ-նադրեցին այդ [եկեղեցիներն] այն օրը, երբ երեք տաղավարների անունները տվեցին: Դրանք «Սուրբ Վկայարաններ» էին կոչվում և Մովսեսի ու Եղիայի անունով են հիշում: [Տե-ղունականում] են կատարվում կիրակի օրվա բոլոր աղոթքները: [Մյուս] երկուսը ևս գնում են ու այնտեղ Աստծուն փառաբանում:

Բոլորն էլ մաշկազգյացներ[9] են և ձեռքի արհեստներ էլ գիտեն: Մեկը զամբյուղ է սար-քում, մյուսները նույն նյութից կողովներ են հյուսում: Եթե ուրիշ բան է պետք լինում, մշակում են՝ լեռից ցած իջնելով: Եվ այն ամե-նը, ինչ արհեստով մշակում են, այլ կարիքնե-րի համար չի օգտագործվում, քան մշտապես վառվող կանթեղների ձեթի կամ ոչխարի մոր-թիների վրա ծախսելու, որոնցից մաշկեղեն հանդերձներ են ձևում: Դրանով են նաև իրենց բահ ու բրիչը հայթայթում: Իրար սիրով են սպասարկում: Քանի որ նրանց մեջ օտարներ էլ կան, ուստի յուրաքանչյուր վաստակից նրանց համար էլ են մաս հանում:

Նրանց մեջ կան նաև մեծահասակներ, ով-քեր հարկադրված չեն իրենց կարիքների հա-մեմատ աշխատել: [Եղբայրները] այդպիսինե-րի համար ավելի շատ են հոգ տանում, քան իրենք իրենց, որովհետև հրեշտականման են և միայն արտաքին կարիքները հոգալու համար չեն միմյանց սիրում, այլև յուրաքանչյուրն իր գաղտնիքն ընկերոջից չի թաքցնում:

Եթե հանկարծ մեկի միտքը ծռվում է՝ տենչալի կերակուրները հիշելով, իր ցավը մյուսին է հայտնում, նրան, ով իրենից ավելի լավն է: Միաբանված աղոթում են և իսկույն անցավ առողջություն ստանում: Որովհետև հիվանդացածն ինքն էլ չարի եկամուտ խոր-հուրդների դեմ կռվել գիտե, մանավանդ որ նախկինում էլ փորձով տեսել էր, որ բոլոր մեղքերը մարդու բնության մեջ կերակուր-ների միջոցով են մուտք գործում: Եթե մեկը մեղքերի այդ դուռը փակում է, բազում չա-րիքներ նրանից հեռու են փախչում:

Ոմանք որովայնի պարարտացումը «բազ-մագլուխ գազան» են կոչել: Տեսա՞ր, նրանք էլ նախ դա են սպանել և դրա մյուս վնասարար գլուխներից էլ այնտեղ՝ լեռան վրա, ան-երկյուղ

[9] Մաշկազ□յաց –մորթի հա□նող

ձերբազատվել են, որպեսզի երկրային բարձունքներից դեպի երկնային բարձունք-ներ՝ իրենց Տիրոջ մոտ, կարողանան վեր ել-նել, ինչպես որ Մովսեսն ու Եղիան էին նույն լեռան վրա Տիրոջը փառքով երևացել:

Իսկ ես՝ ամեն մարդուց ավելի տառա-պածս, որ Տիրոջ շավղով հետիոտն դեպի այն լեռն ընթացա և սքանչելի եղբայրների բազ-մությունն աչքերովս տեսա, ընթերցողներիդ ու ունկնդրողներիդ աղաչում եմ, ինձ համար և առհասարակ ձեր բոլորիդ համար աղոթե-ցեք: Նրանց հետ Աստծու ահեղ դատաստանից փրկվենք և երկնքի արքայությանն արժանի լինենք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսով. Ում փառք հավիտյանս հավիտենից:

. ,/